

MEDIA

| ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | ՁԵՌՆԱՐԿ |



ԻՆՏԵՐՆՅՈՒՄ

Մանույի աջակցության «Ինտերնյուս» հասարակական կազմակերպությունը ներկայացնում է մեդիագրագիտություն դասընթացի ձեռնարկ ավագ դպրոցի ուսուցիչների համար: Ձեռնարկի օգնությամբ ուսուցիչները կկարողանան տատանիներին բացատրել, թե ինչու է աշխատում մեդիա ոլորտը, ինչով է լրատվությունը տարբերվում քարոզչությունից ու գովազդից, ինչ հիմնական հասկացություններ կան, ինչ հնարքներ են օգտագործում լրատվամիջոցները: Վաճարկվող նյութերն ու առաջադրանքներն օգտագործելով՝ ուսուցիչները կկարողանան դիտումների, քննարկումների, խաղերի միջոցով տատանիներին ծանոթացնել մեդիայի աշխատանքին ու սկզբունքներին, կսովորեցնեն քննադատաբար մոտենալ մատուցվող տեղեկատվությանն ու ճիշտ հարցեր բարձրացնել:

Ձեռնարկը ներառում է տասը թեմաների տեսական նյութեր, հղումներ ու հուշումներ ուսուցիչների համար, ինչու է մաս դիդակտիկ նյութեր, առաջադրանքներ, որոնք կարող են կիրառվել դասավանդման ընթացքում:

«Մեդիագրագիտություն» ձեռնարկը տատարաստվել է Զանաշխարհային բանկի և ԱՄՆ ԱԶԳ-ի «Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի աջակցությամբ:



logoner@shapiki.vra-gunavor

Անբաժնություն

| 5 |

թեմա 1 ՄԵԴԻԱՅԻ ԱՍԵԼԻՔԸ

| 5 |

թեմա 2 ՄԵԴԻԱՅԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

| 5 |

թեմա 3 ԿԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՆՔ ՄԵԴԻԱՆ

| 5 |

թեմա 4 ՄԵԴԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

| 5 |

թեմա 5 ՄԵԴԻԱՆ ՆԵՐՄԻՑ

| 5 |

թեմա 6 ՏՊԱԳԻՐ ՄԵԴԻԱ

| 5 |

թեմա 7 ՁԱՅՆԸ ԵՒ ՄԵԴԻԱՆ

| 5 |

թեմա 8 ՊԱՏԿԵՐԸ ԵՒ ՄԵԴԻԱՆ

| 5 |

թեմա 9 ՆՈՐ ՄԵԴԻԱ

| 5 |

թեմա 10 ԵՍ ԵՒ ՄԵԴԻԱՆ. ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱՌԵԼ ԳԻՏԵԼԻՔԸ՝
ՈՐՊԵՍ ՄԵԴԻԱ ՍՊԱՌՈՂ

| 5 |

| 5 |

հավելված

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

| 5 |

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԱՇԱՐ

| 5 |

ՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԿԱԾՆԵՐ

| 5 |

ՄԵԴԻԱ ԲԱՌԱՐԱՆ

*Չայնի ու մասկերի լիպուն
շիճանայր նույնն է, թե
առանց գրեկ-կարդալ սովորե-
լու՝ դորոցն ավարտել:*

Ջորջ Լուկաս
ամերիկացի ֆիլմարտադրող, ռեժիսոր

Մեդիագրագիտությունը 20-րդ դարի երկրորդ կեսին սկիզբ առած շարժում է, որի նդատակն է մեդիա սդամողին օգնել հասկանալ լրատվամիջոցների աշխատանքը, շարժառիթները և ուղղվածությունը, քարոզչությունը տարբերել օբյեկտիվ տեղեկատվությունից, խուսափել մեդիայի բացասական ազդեցությունից...

21-րդ դարում մարդը շրջադատված է մեդիայով՝ դաստամներ, էկրաններ, հաղորդագրություններ, հայտարարություններ, ազդագրեր, խաղեր... Մեդիան սոսկ տեղեկությունների շրջանաման միջավայր չէ. այն ձևավորում է հասարակական կարծիք, ազդում է մարդկանց, հատկադես՝ երեխաների ու դատանիների վարքագծի, որոշումների, աշխարհայացքի և նախասիրությունների վրա: Մեդիա սդամողը դետք է զինված լինի համադատասխան գիտելիքով՝ տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու համար:

Ֆրանսիացիները դրա կարևորությունը գիտակցել են դեռ 1920-ականներիին, երբ կինոն արդեն մեծ տարածում և ազդեցություն ուներ զարգացած երկրներում: Այդ տարիներին է սկիզբ առել մեդիակրթության ու մեդիագրագիտության շարժումը: Ֆրանսիայից այն անցել է Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, եվրոդական այլ երկրներ: 20-րդ դարի երկրորդ կեսին ՅՈՒՆԵՍԿՕ-ն բարձրանայնել է մեդիակրթության կարևորության մասին և այն հայտարարել կրթության առաջնահերթ ոլորտ հաջորդ տասնամյակների համար: Այսօր մեդիակրթության առաջատարներից են Վվստրալիան, Կանադան, Մեծ Բրիտանիան, ՎՄՆ-ը: Այս երկրներում մեդիագրագիտությունը դասավանդվում է դորոցներում կամ որդես առանձին առարկա, կամ որդես հումանիտար առարկաների մաս:

Մեդիագրագիտությունը դետք չէ շփոթել լրագրողական հմտությունների դասավանդման հետ: Իհարկե, գրագետ սդամող լինելու համար դետք է իմանալ, թե ինչդես է դատրաստվում լրատվությունը, կարելի է դասավանդման ընթացքում որոշ հմտություններ փոխանցել, որդեսգի աշակերտները գործնականում դատկերացնեն լրատվամիջոցների աշխատանքը: Բայց մեդիագրագիտության դասընթացի նդատակը ոչ թե մեդիա արտադրող, այլ՝ սդամող դատրաստելն է:

Մեդիակրթության մասնագետ Էլիզաբեթ Թոմանի խոսքով՝ մեդիագրագիտությունը երեք փուլ ունի. առաջին փուլում սդամողը գիտակցում է, որ «մեդիա դիետան» անհրաձեշտություն է, որ դետք է սահմանա-

փակել հեռուստացույցի կամ համակարգչի էկրանի առջև անցկացրած ժամանակը, ավելի քիչ համակարգչային խաղեր խաղալ կամ ամսագրեր թերթել:

Երկրորդ փուլում սղառողը սկսում է քննադատաբար մոտենալ մեդիային ու սովորում է վերլուծել ՉԼՄ-ների աշխատանքը, դրանց ասելիքը, հաղորդվող տեղեկությունները:

Երրորդ փուլն արդեն ավելի խորքային վերլուծություն է ենթադրում. ո՞վ է ղատրաստում այն մեդիա «աղբանքը», որ մենք սղառում ենք, ի՞նչ նոդատակ են հետադոդում արտադրողները, ո՞ւմ է ուղղված ասելիքը, ո՞վ է այս ամենից շահում, ո՞վ է տուժում... Այսինքն՝ սոցիալ -տնտեսական-քաղաքական վերլուծության ենք ենթարկում մեր տեսածը, լսածն ու կարդացածը:

Պետք է նկատի ունենալ, որ մեդիան միայն լրատվամիջոցները չեն. ականջակալներում հնչող երգերը, ֆիլմերը, համակարգչային խաղերը, դրսում փակցված հայտարարությունները, անգամ՝ կոնֆետի թղթի վրայի գրությունները մեդիայի մաս են:

Այնուամենայնիվ, այս ձեռնարկը կկենտրոնանա լրատվության միջոցների աշխատանքի ու ազդեցության վրա՝ փորձելով տասը դասերի միջոցով փոխանցել ամենակարևորը: Ձեռնարկի հավելվածում կգտնեք նաև նյութեր, հղումներ, որոնք կօգնեն ավելի ընդարձակել մեդիայի մասին ձեր գիտելիքները:

Մեդիագրագիտության դասընթացի այս ձեռնարկը ղատրաստված է այդ թեմայով հետաքրքրված ուսուցիչների համար, ովքեր ցանկություն ունեն դասընթացը կազմակերպել իրենց դոդոցում: Այն ներառում է տեսական նյութեր, խորհուրդներ, որոնք կօգնեն ուսուցիչներին հասկանալ թե՛մաները, աղա փոխանցել դրանք աշակերտներին: Ձեռնարկը ղարունակում է տասը 90 րոդեանոց դասի նկարագրություն, տեսական մաս, նյութեր, հղումներ, գործնական աշխատանքի ցուցումներ: Դասընթացը կազմվել է միջազգային փորձի հիման վրա՝ օգտվելով մասնագիտական ծրագրերից ու գրքերից: Հիմքում ընկած են նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մեդիակրթություն» ուսումնական փաթեթի սկզբունքներն ու առաջարկությունները: Այստեղ ներկայացված դասերը մշակվել են բարձր դասարանների աշակերտների համար:

Տեղեկատվական գրագիտությունն ու մեդիագրագիտությունն օգնում են մարդուն ավելի գիտակից դոդումներ կայացնել որդես մեդիա սղառողներ, մեկնաբանել մեդիայի աշխատանքը, ինչոդես նաեւ ստեղծել մեդիա բովանդակություն՝ ի շահ իրենց իսկ իրավունքների ղաշտոդանոդյան:

ՅՈՒՆԵՍԿՕ

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՁԵՌՆԱՐԿ-ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Մեղիագրագիտությունը տարբեր երկրներում տարբեր սկզբունքներով է դասավանդվում՝ շեշտադրելով առարկայի տարբեր բաղադրիչներ, օգտագործելով տարբեր մեթոդներ: Այդուհանդերձ, այն շունչի դասագիրք կամ հստակ բանաձևեր: Մեղիագրագիտությունն առարկայի դասավանդումը մեծադեպ կախված է դասավանդող ուսուցչի և դրոշմի մոտեցումից, որոնք կարող են իրենց նախընտրած ուղղությամբ ընդլայնել ու փոխել դասընթացը՝ հենվելով ծրագրի կամ ուղեցույցի վրա:

Այս ձեռնարկը ուսուցիչներին տրամադրվում է որդես ուղեցույց՝ մեղիագրագիտության 10 թեմաներն աշակերտներին ներկայացնելու համար: Թեև ամեն մի դասը ներկայացված է հստակ կառուցվածքով, տեսական նյութերով, գործնական առաջադրանքներով, որոնք թույլ են տալիս հետաքրքիր ներկայացնել թեման, սակայն դասավանդողը նաև ազատ է՝ փոխելու դասի կառուցվածքը, ուղղվածությունը, մոտեցումները: Ենթադրվում է, որ առարկան դասավանդելու են թեմայով հետաքրքրված, ինֆորմացված ուսուցիչներ, ովքեր դատարաստ են և ուզում են ինքնակրթվելով հարստացնել ոչ միայն իրենց գիտելիքը, այլև դասընթացի նյութերը:

Ձեռնարկը կազմված է երկու հիմնական մասից՝ Թեմաներ և Հավելված:

Թեմաներ բաժնում ներկայացված է տասը թեմա, որոնք ուսուցիչը կարող է մատուցել այնքան դասաժամում, որքան անհրաժեշտ է:

Վմեն դասի մեջ քայլերով ներկայացված է ուսուցչի անելիքը՝ դիտումներ, քննարկումներ, տեսական նյութի մատուցում, խաղեր, առաջադրանքներ: Դասերի վերջում տրված է ամփոփ տեսական նյութ՝ տվյալ թեմայի վերաբերյալ: Դա առաջին հերթին ուղղված է ուսուցչին՝ դասին դատարաստվելու, թեմայի մասին նախնական գիտելիք ստանալու համար: Իր ընտրությամբ ուսուցիչը կարող է այս նյութերից որոշակի հատվածներ տրամադրել աշակերտներին: Վմեն դաս ունի նաև մեղիա բառարան, որտեղ տրված են այդ դասին հանդիպող մեղիա եզրույթները: Վառաջին դասին աշակերտները բլոգ են բացում և ամեն դասի հենց բլոգում լրացնում են մեղիա բառարանը:

Վմեն թեման ներկայացնելու համար կան նաև ինտերնետային հղումներ, որոնք կօգնեն ուսուցչին խորացնել գիտելիքը, լրացուցիչ հետաքրքիր նյութեր գտնել: Տրամադրված հղումներով հնարավոր է ծանոթանալ նաև այլ երկրներում մեղիագրագիտության դասավանդման սկզբունքներին, դասանցկացման ձևերին և օգտվել դրանցից:

Ձեռնարկի հավելվածում տեղակայված են նախնական ու ավարտական հարցաշարեր, որ կօգնեն ուսուցչին գնահատել երեխաների նախնական գիտելիքն ու առաջընթացը: Այս բաժնում կգտնեք նաև մեղիա դաշտի փորձագետների կողմից գրված հոդվածներ: Դրանք ուսուցչի ընթերցանության համար են: Այս հոդվածների նույնպես է հարստացնել ուսուցչի մեղիա գիտելիքը, ավելի մանրամասն ու համադարձակ տեղեկություններ տալ դաշտի մասին:

- 10 թեմա
- տեսություն
- վարժություններ
- խաղեր
- հղումներ
- հարցաշարեր
- հուշումներ

Ձեռնարկին կցված է էլեկտրոնային կրիչ՝ Մուլտիմեդիա հավելված: Այստեղ թղթադրամներով դասավորված են յուրաքանչյուր թեմային վերաբերող հոդվածներ, տեսաձայնային նյութեր՝ դասի ժամանակ օգտագործելու համար: Դրանք ներառում են և մեր դատրաստած ուսումնական նյութերը, և եթերից վերցված ձայնագրությունները՝ քննարկումների համար: Այդ օրինակները ցանկալի է թարմացնել և փոփոխել՝ քննարկումներն ավելի արդիական ու հետաքրքիր դարձնելու համար: Նույնպես հարմար է քննարկման և վերլուծության համար օրինակներ ընտրել օրվա հեռուստառադիո եթերից, թերթերից, ինտերնետային հրատարակություններից... Քննարկումները կարելի է ակտիվացնել և աշխուժացնել մրցույթի կամ խաղի տարր ներմուծելով:


Մուլտիմեդիա հավելվածում կգտնեք նաև այս ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը:

Ձեռնարկը դատրաստվել է՝ հաշվի առնելով հայաստանի դպրոցների միջին տեխնիկական հնարավորություններն ու ուսուցիչների դատրաստվածությունը տվյալ ոլորտից. ըստ այդմ, դասերը հնարավոր է անցկացնել անգամ միայն համակարգիչ, լուսանկարող-ձայնագրող սարք օգտագործելով: Եթե ուսուցիչը բանիմաց է, և դպրոցն ունի անհրաժեշտ տեխնիկա, կարելի է ավելացնել արտադրական մասը և մեղիա քննադատությունը սովորել մեղիա արտադրանք դատրաստելով:

Քանի որ մերօրյա աշակերտները հաճախ ավելի իրազեկ են տեխնոլոգիական նորարարություններին, ցանկալի է նրանց ակտիվորեն ներգրավել դասանցկացման դրոցեսին, նրանց մասնակից դարձնել դասավանդման ու ինֆորմացիայի փոխանակման ընթացքին (օրինակ՝ հանձնարարել նրանց՝ դասի բոլոր մասնակիցների համար բացել դասընթացի բլոգը, կամ մոնտաժել ու ինտերնետում տեղադրել տեսանյութ): Այդպիսով՝ աշակերտներն իրենց ավելի կարևորված ու ներգրավված կզգան և կօգնեն ուսուցչին: ■

ԹԵՄԱ 1

ՄԵԴԻԱՅԻ ԱՍԵԼԻՔԸ



ՄԻՆԻ-ԹԵՍԱՏ. ՄԵԴԻԱ ԳԻՏԵԼԻՔԻ ԱՏՈՒԳՈՒՄ

Դասը սկսելուց առաջ աշակերտներին բաժանվում է հարցաշար՝ ստուգելու նրանց նախնական գիտելիքը և ղաատկերացումները մեդիայի մասին: Այդ ինֆորմացիան ղետք է ուսուցչին դասընթացի, հատկաղես՝ քննարկումների համար:

Առաջին թեմայի ընթացքում աշակերտները ծանոթանում են հիմնական հասկացություններին ու գործնական առաջադրանքի միջոցով փորձում են հասկանալ, թե որն է մեդիայի ասելիքը, ինչ է **ինֆորմացիան**, որքանով է **տեղեկատվության բնույթը** կախված **աղբյուրներից** ու **լսարանից**:

քայլ 1

ՔԱՆԱՂԿՈՒՄ – ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչը ծանոթանում է մեդիայի մասին աշակերտների ունեցած գիտելիքի, ղաատկերացումների հետ:

ՅԱՐՑ

- Ի՞նչ եք դիտում/լսում/ կարդում: Ինչո՞ւ:
- Ի՞նչ եք փնտրում այդ լրատվամիջոցներում՝ լրատվություն՞, գիտելի՞ք, երաժշտություն՞, խա՞ղ, բամբասա՞նք:
- Որքա՞ն ժամանակ եք տրամադրում համակարգչին, հեռուստացույցին:

քայլ 2

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչը հարց ու ղատասխանի միջոցով բացատրում է, թե ինչ է **ինֆորմացիան**:

ՅԱՐՑԵՐ

- Այսօր մինչև դղրոց հասնելը ի՞նչ տեղեկություններ եք ստացել:
- Որտեղի՞ց կամ ումի՞ց:

■ Ո՞ր դեղաբերում էր այդ տեղեկությունը հետաքրքիր կամ ղետքական, ո՞ր դեղաբերում՝ ավելորդ կամ անողետք:

■ Ինչու՞ էր հետաքրքիր, ինչու՞ էր ավելորդ:

(Օրինակներ, որ կարող է ուսուցիչը հուշել. վերելակում կամ շենքերի, խանութների տատերին փակցված հայտարարություններ, տեղեկություններ, գովազդային վահանակներ փողոցում կամ գովազդ մետրոյում, ավտոբուսների վրա):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Վարժության օգնությամբ երեխաները սովորում են լուրի շահանհիշները, առանձնահատկությունները:

Ուսուցիչը երեխաներին բաժանում է 3-4 խմբի: Խմբերին տալիս է 5 րոպե ժամանակ, որի ընթացքում նրանք լիտի քննարկեն և վերջում հայտնեն որևէ նորություն, որը կհետաքրքիր դասընկերներին:

Բոլոր խմբերը ներկայացնում են լուրը կամ նորությունը, աղա աշակերտները քննարկում են:

ՅԱՐՑԵՐ

- Ո՞ր լուրն էր հետաքրքիր: Ինչու՞:
- Վրոյո՞ք այլ տարիքային խմբերի կամ ուրիշ քաղաքների բնակիչների համար դա նույնպես լուր է:
- Վրոյո՞ք ցանկացած տեղեկություն լուր է: Ո՞ր տեղեկությունն է լուր: Որո՞նք են լուրի բնորոշ հատկանհիշները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Այս վարժությունը աշակերտներին կօգնի հասկանալ, թե որն է լուրը:

Ուսուցիչն ընթերցում է հետևյալ վերնագրերը և/կամ բաժանում աշակերտներին և/կամ յորոյեկտորով ցույց տալիս մեծ էկրանին:

- 1, Դելֆինները լողում են ջրում
- 2, Դեկտեմբերի 31-ը ոչ աշխատանքային օր է
- 3, Ուսուցիչը դաս է հարցրել աշակերտին
- 4, Ամերիկացի զբոսաշրջիկին կողոպտել են Աբուլյան փողոցում



- 5, Այուս շաբաթ ձյուն է սղասվում
- 6, Գործազրկությունը Հայաստանում նվազել է տասը տոկոսով
- 7, Կիկի ամանորյա տոնածառը կտեղադրվի դեկտեմբերի 1-ին
- 8, Նյու Յորքի մետրոյի շորրորդ գիծը երկու օր չի աշխատի
- 9, Ծունը կծել է մարդուն
- 10, Մարդը կծել է շանը

Աշակերտները քննարկում են, թե հայաստանյան լսարանի համար դրանցից որո՞նք են լուր, նորություն, որոնք՝ ոչ (ճիշտ տարբերակներն ընդգծված են):

ՀԱՐՑԵՐ վերնագրերից յուրաքանչյուրի համար.

- Կարո՞ղ է սա տեղ գտնել հայաստանյան լրատվամիջոցի լուրերի թողարկման մեջ:
- Ի՞նչ նոր բան ենք իմանում այս վերնագրից:
- Որքանո՞վ է սա առնչվում հայաստանցիների հետ:
- Ինչքանո՞վ է դա հետաքրքիր հայաստանյան լսարանին:
- Ինչու՞:
- Ու՞մ է այս լուրը հետաքրքիր:

քալ 5

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Այս վարժությունն աշակերտներին կօգնի հասկանալ լսարանի դերը, թե ինչու է լուրը փոխվում՝ կախված լսարանից:

Նախ ուսուցիչը ներկայացնում է շրջված բուրգի սկզբունքը, որով աշակերտները լսարանի կառուցումն արժեքավորում: Այս աշակերտներին բաժանում է 4 խմբի: Խմբերից յուրաքանչյուրը ղեկավար է ներկայացնում նույն իրադարձությունը՝ տարբեր լսարանների համար: Ուսուցիչը խմբերին բաժանում է իրադարձության փաստերի մեկական օրինակ և հանձնարարում՝ տրված փաստերից օգտվելով կազմել լուր տարբեր լսարանների համար: Պարտադիր չէ օգտագործել ամբողջ ինֆորմացիան. աշակերտները կարող են ընտրել, թե հատկապես ինչի մասին դասընկերներին ներկայացնել: Կախված լսարանից խմբերը լսարանի ղեկավարին ներկայացնում և ունենում խոսակցական, դաշտոնական և այլն:

Իրադարձություն՝ դրոշմակա հավաքույթ, որն ավարտվել է ծեծկոտուքով:

Փաստեր՝ դրոշմում կազմակերպվել է երեկոյթ՝ նվիրված աղբիլի 7-ին: Մասնակցել են 8-10-րդ դասարանների աշակերտները, ուսուցիչները, իսկ տնօրենը գործուղման է եղել: Երեկոյթի սեղանին եղել է աղջիկների դասարաստած թխվածքը, միրգ, քաղցրեղեն, հյույեր:

8Ա-ն դասարաստել է փոքրիկ բեմադրություն, 9Բ-ն՝ մայրերին նվիրված մի քանի երգ, տասներորդի տղաները բոլոր աղջիկների համար կակաչներ են գնել: Կակաչների մի մասը կարմիր է եղել, մյուսները՝ դեղին:

Լավագույն դարային զույգ մրցույթում հաղթել են 10Գ-ի Արմինեն ու Կարենը, ինտելեկտուալ խաղում հաղթել է 9Ա-ի Նարինեն: Վիճակահանությանը՝ երեկոյի թագուհի ու թագավոր են ընտրվել ութերորդի Աննան ու տասներորդի Նարեկը, ով դրոշմում հայտնի է որդես «գիրք կրծող» «-ծակ մաթենատիկոս»: Նարեկն անցած կիսամյակում բոլոր առարկաներից միայն գերազանց գնահատականներ է ստացել:

Մրցույթի կանոններով՝ թագուհին ու թագավորը ղեկավարում են միասին դարեն, ինչը դուր չի եկել Արամին: Նա սիրահարված է Աննային ու թույլ չի տա, որ Աննայի հետ որևէ տղա դարի: Արամն ու նրա ընկերները դարի ընթացքում մոտեցել են Նարեկին ու քաջքշել, տարել մի կողմ: Նարեկի դասարանցիներից երկուսը, ովքեր այդ դարին դաստիարակի մոտ գրուցելիս են եղել, մոտեցել են, փորձել դաշտոնանել: Տղաների վեճը փոխվել է ծեծկոտուքի, որի հետևանքով Նարեկի աչքը վնասվել է: Կոտրվել են դրոշմում դասարանի թանկարժեք բարձրախոսները, ինչպես նաև Արամի iPhone հեռախոսը: Արդյունքում՝ Նարեկը տեղափոխվել է հիվանդանոց, իսկ Արամին ու նրա ընկերներին տարել են ոստիկանություն:

Չաչորդ օրը Աննան դրոշմ չի գնացել: Նրա ընկերուհին՝ Մարինեն, աղջիկներին դասարան է, թե Նարեկը դարելիս համբուրել է Աննային, Աննան էլ նրան խփել է: Իսկ Արամն էլ դասարան է, թե Արամի ծնողները դասարանում են նրան տեղափոխել ուրիշ դրոշմ: Նա վստահ է, որ հենց Արամն է խփել Նարեկին:

Աշակերտներն, ըստ խմբերի, դեղքը դատում են համադասարանական լսարանին:

Խումբ Ա

դասարանում է լուր տնօրենի համար՝ ուսմասվարի անունից:

Խումբ Բ

դասարանում է լուր բացակա դասընկերների համար՝ երեխաների անունից:

Խումբ Գ

դասարանում է լուր ծնողների համար՝ երեխաների անունից:

Խումբ Դ

լուր դեղքի մասին՝ տեղական լրատվամիջոցով լուրերի թողարկման համար:

Լուրը ղեկավարում է դասարանի առնվազն երեք հարցի՝ ո՞վ (ի՞նչը), ե՞րբ, որտե՞ղ, առաջ մասնի՞նչը, ինչո՞ւ հարցերին:

ԼՈՒՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐՆ ԵՆ.

նոր

հետաքրքիր

յուրօրինակ

արտառոց

կարևոր

արդիական

լսարանին

վերաբերող...

Լուրը ղատրաստելուց հետո՝ ամեն խմբից մեկական մերկայացուցիչ կարողում է այն: Վրա համեմատում են լուրերը՝ ըստ լսարանի, օգտագործված փաստերի, կիրառված լեզվի, աղբյուրների... Ընտրում են հաղթող թիմ, որի գրած լուրը ամենից շատ է համադատասխանում իրենց մերկայացված ղահանջներին:

ՀՂՐՑԵՐ

- Ինչո՞ւ է այս լուրը հետաքրքիր տվյալ լսարանին:
- Ձեր կարծիքով այս լսարանին (բացակա աշակերտներ, ծնողներ, տնօրեն, հեռուստաղիտողներ) հատկադես ո՞ր փաստերն են հետաքրքրում և ինչո՞ւ:
- Ինչո՞ւ եք օգտագործել այս կամ այն փաստը կամ կարծիքը:
- Որքանո՞վ է լուրի լեզուն/ոճը կախված մրանից, թե ում ես ղատում:
- Նման լուրն արդյո՞ք հետաքրքիր կլիներ, եթե դեղքը ղատահած լիներ կողքի դղրոցում/ուրիշ քաղաքում:
- Լսարանում ի՞նչ հարցեր են առաջանում փաստերը կարդալիս: Ի՞նչ փաստեր են ղակասում:

Ուսուցիչը կարող է ընտրել մեկ հաղթող լուր, որը կտեղաղղվի դասընթացի համար բացվող բլոգում:

ԲԼՈԳԻ ԲՂՑՈՒՄ

Եթե մյուս դասերի առաջաղղանքները երեխաները գրում են տետրում կամ համակարգչային փաստաթղթերում, աղա մեղիագրագիտության դասերի ընթացքում առաջաղղանքներից շատերը ղիտի արվեն բլոգում: Ղյն աշակերտներին թույլ կտա միասին աշխատել մի հարթակում, քննարկել միմյանց մյութերը, իսկ ուսուցչին՝ խմբագրել ու արձագանքել: Բլոգը մաս հնարավորություն է ըմճեռում լինել «լրագրող», մյութ տեղաղղել ու լսարանից արձագանք ստանալ:

Ղյն աշխատանքային գործիք է. այդ ղատճառով անիրաճեշտ է, որ առաջին դասի ավարտին դասարանը բացի աշխատանքային բլոգ կամ օգտագործի արդեն ունեցած բլոգը:

Օրինակ՝ <http://dprocakan.wordpress.com/>

Ուսուցիչն աշակերտների հետ բացում է աշխատանքային բլոգ: Ղշակերտները բլոգում ստեղծում են Մեղիա բառարան բաճիմը, որը ղետք է թարմացվի ամեն դասից հետո:

Ղմեն դասի ավարտին ուսուցիչն ընտրում է բլոգի համար ղատասխանա-

տու երեք աշակերտների, ովքեր տանից Մեդիա բառարանում կավելացնեն այդ դասին սովորած նոր բառերն ու դրանց բացատրությունները:

Ուսուցիչը Թեմա 1-ի վերջին վարժության հաղթող թիմին հանձնարարում է բլոգում տեղադրել իրենց գրած լուրը:

(Բլոգի դերի և այլ կիրառությունների մասին կխոսենք Թեմա 9-ում):

Ուսուցիչն աշակերտների հետ փորձում է ձևակերպել, թե ինչ է ինֆորմացիան: Հիշում են նաև այդ դասին սովորած նոր հասկացությունները, տալիս դրանց բացատրությունները: Այդ հասկացությունները դիտարկելով տեղադրվեն բլոգի Մեդիա բառարան բաժնում:

← ամփոփում

Ի՞նչ է ինֆորմացիան

← ուսուցչի համար

Ամեն օր, երբ արթնանում ենք ու միացնում հեռուստացույցը կամ տնից դուրս ենք գալիս ու տրանսպորտում ուղիղ ենք լսում, ստանում ենք տեքստային հաղորդագրություններ ու զանգեր ենք կատարում կամ դարձառեքս քայլում ենք գովազդային վահանակներով լի փողոցում, մենք հայտնվում ենք ինֆորմացիոն հոսքերի մեջ: Եթե նույնիսկ չենք մտադասում մեր առջև փակցված հսկա գունավոր էկրանը կամ վահանակը, մեկ է՝ գույները, լույսերը, բառերը, դեմքերը ինչ-որ կերպ մնում են մեր հիշողության մեջ և ազդում են գիտելիքի ու դատելագրությունների վրա:

Ինֆորմացիան միայն տեքստային շարադրանքը չէ. ասելիք, ուղերձ (message) են դարձնում նաև ձայներն ու դատելները: Բայց այս ամենը գիտելիք է դառնում, երբ մեր ուղեղը համակարգում ու դասակարգում է այն՝ համարելով արդեն ունեցած գիտելիքի հետ: Տեխնիկական իմաստով ինֆորմացիան գրավոր կամ բանավոր սիմվոլների շարադրանքն է, այլ կերպ ասած՝ ասելիքը, փոխանցվող տեղեկությունը:

Լուր

Լուրը կամ նորությունը դեռևս է սղախիչ դատասխանի առնվազն երեք հարցի՝ ո՞վ (ինչը), ե՞րբ, որտե՞ղ, առա՞նակ՝ ինչո՞ւ, ինչո՞ւ հարցերին: Լուրի բովանդակության մատուցման հիմնական մոդելն անվանում են շրջված բուրգ. նախ հաղորդվում է ամենակարևոր տեղեկությունը, հետո՝ ըստ կարևորության նվազման: Լուրի առաջին դարձվածությունն անվանում են լիդ (lead), որը սովորաբար հաղորդում է կամ ամենակարևոր ու հետաքրքիր փաստը, կամ ամբողջ լուրի ամփոփ ինֆորմացիան: Լուրը դիտարկելի հավաստի (փաստը գերադասություն ունենա լրագրողական մեկնաբանության հանդեմ), վիճահարույց թեմաների դեմքում հնչեցվի առնվազն երկու հակադիր կարծիք, մերկայացնի դատասխանատու մարմինների խոսքը, նախադասությունները լինեն կարծ, որդեգրի միանգամից ընկալվեն, իրադարձությունը դեռևս է մերկայացվի այնպես, կարծես դատարանում է անտեղյակ, բայց մտերիմ մարդու (տատիկ, ընկեր, ընկերուհի), դիտարկում ունենա տրամադրիչ սկիզբ, հանրագումարի բերող վերջաբան:

Լուրը կամ նորությունն առաջին հերթին դեռևս է լինի թարմ, արդիական և

ԱՆԴՐԻՎ ԲՎՈՎՐԱՆ

Ինֆորմացիա

Լսարան

աղբյուր

փաստ

կարծիք

լուր

վերնագիր

կարևոր տվյալ լսարանի համար: Նորություն լինելու համար տեղեկությունը ղեկավար է նաև հետաքրքիր, արտառոց լինի: Ինչպես ամերիկացի լրագրող Չարլզ Անդերսոնն է ասում՝ «Երբ շունը կծում է մարդուն, դա լուր չէ, երբ մարդն է կծում շանը՝ լուր է»:

Լուրը ղեկավար է նաև կառավար լինի լսարանի հետ: Օրինակ այն, որ Կուբայում տասը տոկոսով բարձրացրել են ուսուցիչների աշխատավարձը, կամ, ասենք, Լոնդոնում մետրոյի կայարան է վերանորոգվել, առանձնապես հետաքրքիր չէ հայաստանյան լսարանի համար, ու դժվար թե այս տեղեկություններն ընդգրկվեն հայկական լրատվական թողարկումներում: Դրանք հետաքրքիր կլինեն, եթե կառավար կամ համեմատվեն տեղական իրականության հետ կամ լինեն արտառոց. ասենք, Կուբայում ուսուցիչների աշխատավարձերը միլիոնների հասնեն: Լրատվությունը չի սահմանափակվում միայն տեղական նորություններով. միջազգային մակարդակում տեղի ունեցած իրադարձությունները, որոնք ինչ-որ կերպ առնչվում են տվյալ լսարանին, ազդեցություն ունեն այդ լսարանի վրա կամ դարձադառնա հետաքրքրում են, նույնպես լուր են:

Լուրը լրագրային ժամերից մեկն է միայն: ՉԼՍ-ներում ամենից հաճախ հանդիպող մյուս ժամերն են՝ **հարցազրույց, ռեպորտաժ, հոդված, վերլուծություն, ակմարկ, առաջնորդող...**

Այս ժամերը լուրից ավելի ընդարձակ են՝ տեղեկատվության, և ազատ՝ ուձային առումներով: Լուրին բնորոշ հարցերին դատասխանելուց բացի, այս ժամերը թույլ են տալիս ներառել հավելյալ մանրամասներ, «դատություն դատության հետևում», «անեկոլոմներ», հետաքրքիր դրվագներ, դիտվածներ, հեղինակային կարծիք, ընդարձակ մեջբերումներ ու վիճակագրական տվյալներ...

ՀԱՎԵԼՎԱԾ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Ինչպե՞ս կառուցել նորություն», Հանրային լրագրության ակումբ, <http://media.am/pjc-how-to-build-story>
2. «Լրագրության հինգ կարևոր հարցերը», Հանրային լրագրության ակումբ, <http://media.am/pjc-5-W>
3. Ակուտագավա, «Թավուտում», <http://bit.ly/TS0uE7>
4. Allan Bell, The language of News Media, Մուլտիմեդիա հավելված
5. News: Beyond the Myth of Objectivity, Center for Media Literacy, <http://bit.ly/U3nYYK>
6. Անվճար նյութեր ուսուցիչների համար, <http://www.medialiteracy.com/freestuff.htm>

«Ժամնալիստիկայի համառոտ
դաստնություն», Այդին Աորիկ-
յանի «Ժամնալիստիկա. ինչ,
ինչդե, ինչու» գրքից, տե՛ս ...
էջը, Մեդիայի դաստնության
ժամանակացույց, տե՛ս Աու-
տիմեդիա հավելվածը:

քայլ 1

Ուսուցիչը երեխաներին բաժանում և/ կամ դրոյեկտորով ցուցադրում է
ժայռադաստնների օրինակներ (տես Աուտիմեդիա հավելվածը) և
առաջարկում նրանց դաստնել դաստնություններ՝ ըստ այդ դաստնե-
րի: Վշակերտները փորձում են կռահել, թե ինչ է ուզել դաստնել նախա-
նարդն այդ ժայռադաստններով: Կցված ժայռադաստններից միայն
3-րդն ունի բացատրություն, մյուսները կարող են մեկնաբանվել կանա-
յականորեն: Վշակերտները կարող են հորինել ու դաստնել մի քանի
տարբերակներ:

Այս կերպ ուսուցիչն աշակերտներին հուշում է, թե որտեղից է սկսվել մե-
դիայի դաստնությունը, և ինչդե են նախնադարում տեղեկություններ
փոխանակել:

քայլ 2

Մեդիա դաստնության շարունակությունը ներկայացնելու համար ուսու-
ցիչը նախադե դաստնություն է համակարգչային դաստներաշար
(slide-show) ըստ Մեդիա դաստնության ժամանակացույցի (տե՛ս Աու-
տիմեդիա հավելվածը): Ներկայացումն ուղեկցվում է քննարկմամբ,
հարց ու դաստնախանով:

ՀԱՐՑԵՐ.

- Ի՞նչ եք կարծում, ժայռադաստններից հետո ի՞նչ նյութեր են օգ-
տագործել մարդիկ՝ տեղեկություններ փոխանցելու համար:
- Ովքե՞ր են առաջինը թուղթ ստացել:
- Ե՞րբ են ստեղծվել առաջին թերթերը: Որտե՞ղ:
- Գիտե՞ք, թե երբ է եղել տղագրության գյուտը:
- Երբվանի՞ց գոյություն ունեն ռադիոն ու հեռուստատեսությունը:
- Քանի՞ տարեկան է համացանցը:

Աշակերտները բաժանվում են շորս խմբի: Ամեն խումբ քննարկում և ներկայացնում է մեդիայի մի տեսակի առանձնահատկությունները, ներկա դաշտը (եթե կա հնարավորություն, աշակերտները կարող են օգտվել ինտերնետից՝ տեղեկություններ գտնելու համար): Ներկայացնելուց հետո աշակերտները քննարկում են թե՛ման, միմյանց ճշտելով և լրացումներ անելով: Ուսուցիչը ուղղորդում է քննարկումը՝ հենվելով տեսական նյութի վրա:

Խումբ 1- թերթ

- Ի՞նչ թերթեր են տղվում Հայաստանում:
- Դրանց տեսակները և ուղղվածությունը աշակերտների տատկերացմամբ:
- Որո՞նք են թերթի առավելությունները և թերությունները որդես լրատվամիջոց:

Խումբ 2- ռադիո


- Ի՞նչ ռադիոկայաններ կան Հայաստանում:
- Ի՞նչ տարբերություններ ունեն, ի՞նչ ուղղվածության են:
- Որո՞նք են ռադիոյի առավելությունները և թերությունները որդես լրատվամիջոց:

Խումբ 3- հեռուստատեսություն

- Ի՞նչ հեռուստաընկերություններ կան Հայաստանում:
- Ի՞նչ տարբերություններ ունեն, ի՞նչ ուղղվածության են:
- Որո՞նք են հեռուստատեսության առավելությունները և թերությունները որդես լրատվամիջոց:

Խումբ 4-ինտերնետ

- Ի՞նչ ինտերնետային լրատվամիջոցներ գիտեք:
- Առանձնացրեք ինտերնետային տարբերականները, ինտերնետ ռադիոներն ու հեռուստաընկերությունները:
- Որո՞նք են ինտերնետի առավելությունները և թերությունները որդես լրատվամիջոց:



Ուսուցիչը համառոտ ձևով ներկայացնում է հանրային, մասնավոր, դե-տական ու համայնքային լրատվամիջոցների տարբերությունները: Խոսում է հանրային հեռուստատեսության և ռադիոյի տարտավորու-թյունների մասին:

ՔՆՆԱՎՐԿՈՒՄ - ՅՂԻՑԵՐ

- Որո՞նք են ՀՀ-ի հանրային հեռուստաընկերությունը և ռադիոընկե-րությունը:
- Որքանո՞վ են հանրային հեռուստատեսությունը և ռադիոն կատա-րում իրենց տարտավորությունները (բավարարո՞ւմ են հասարակու-թյան տարբեր շերտերի հետաքրքրություններն ու պահանջները, ադահովո՞ւմ են անաչառ լրատվություն, հաղորդումների բազմա-զանություն...)
- Ձեզ և ձեր հասակակիցներին հետաքրքիր ի՞նչ հաղորդումներ կան հանրայինի եթերում:
- Մասնավոր հեռուստառադիոալիքները ըստ ձեզ ի՞նչ շահեր են հե-տադնում, ինչո՞ւ են գումար աշխատում:
- Կարո՞ղ եք ենթադրել մասնավոր հեռուստաալիքների ուղղվածու-թյունները՝ փաթեթավորումից (դիզայն, լոգո, կարգախոս, վերնագ-րեր), հաղորդումներից ելնելով:

ՎՂԻԺՈՒԹՅՈՒՆ

Ստուգիչը բաժանվում են 4 խմբի և կազմում են լուրի սխեմա տար-բեր լրատվամիջոցների համար: Վնեն խումբ լուրի գրի առնի, թե ինչ նյութեր է հավաքել/դատարաստելու լրատվամիջոցի իր տեսակով լու-րը հաղորդելու համար:

Ուսուցիչը խմբերին է բաժանում լուրի մեկական օրինակ և տալիս է հանձնարարությունը: Ուսուցիչը կարող է նաև ընտրել մեկ այլ լուր՝ այդ շաբաթվա լրահոսից, որ ավելի թարմ, արդիական ու հետաքրքիր լի-նի: Ստորև ներկայացնում ենք մի օրինակ:

Լուր

2012թ. ապրիլի 22-ին Երևանը հռչակվեց գրքի համաշխարհային մայ-րաքաղաք: Այդ օրը Երևանի տարբեր հատվածներում տոնական մի-ջոցաժամեր էին:

Միջոցաժամերը մեկնարկեցին Տիրան Սիրանյանի՝ «Բոենու-Այրես»

խորագրով ֆոտոցուցահանդեսի բացման արարողությամբ, այնուհետև ելույթներով հանդես եկան ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Արզախյանը և այլք: ՀՀ նախագահին իր ելույթում նշեց, թե Պատահական չէ, որ Երևանը «Գրքի համաշխարհային մայրաքաղաք» հռչակված 12-րդ քաղաքն է, և հենց 2012 թվականին: Տոնի առիթով հանդիսավոր կերպով տեղի ունեցավ նաև «Հայփոստ» ընկերության կողմից թողարկված նամականիշի մարում: Նամականիշը թաշտոնադրեց կոչվել է՝ «Հայ գրատոլության 500-ամյակը. Երևանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք»:

Հաջորդ օրը՝ աղբիլի 23-ին, բացվեց Դավիթ Երևանցու քանդակը: Դանրա նվերն է հայրենիքին և խորհրդանշում է «Աշո ճառընտիր» մատյանը, որը հայերեն ամենամեծ մագաղաթյա ձեռագիր մատյանն է: Արձանի բացմանը ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Արզախյանը, Հայաստան ժամանած բազմաթիվ հյուրեր: «Արձանդրես»-ի փոխանցմամբ՝ քանդակի հեղինակ Դավիթ Երևանցին նշել է, որ հուշարձանը կոչված է մեծարելու հայ կնոջը՝ ազգային ինքնության ու մշակութային ժառանգության պահպանման գործում ունեցած բացառիկ դերակատարման համար:

Միջոցառումների մաս էր նաև իտալացի երգիչ Անդրեա Բոչելիի համերգը Երևանի Ազատության հրապարակում:

Խումբ 1 – Թերթ (Լրագիր)

- Տրված տեղեկություններից որո՞նք լինելու է օգտագործել հոդվածում:
- Ու՞մից է լինելու հարցազրույց վերցնել:
- Ի՞նչ լուսանկարներ են լինելու:

Խումբ 2- Ռադիո

- Ի՞նչ ձայներ կարելի է ընդգրկել (երաժշտություն, ծափեր, բղավոցներ, բնության ձայներ)
- Ո՞ւմ կարելի է ձայնագրել, ինչի՞ մասին:

Խումբ 3 – Չեռուստատեսություն

- Ի՞նչ կադրեր են լինելու:
- Ո՞ր միջոցառումները լինելու է նկարել:
- Ո՞ւմ է լինելու խոսեցնել, ինչի՞ մասին:

- Ի՞նչ լուրջ է ասի լրագրողն իր տեքստում, ի՞նչ լուրջ ասեն հարցազրույց տվողները:

Խումբ 4- Ինտերնետ

- Ի՞նչ տեքստ է լուրջ:
- Դ՞ուրեք են արդյոք լուսանկարներ, տեսանյութեր կամ ձայնագրություններ: Եթե այո, ապա ինչու:

ամփոփում

Ուսուցիչն ամփոփում է դասը՝ աշակերտների հետ վերհիշելով մեդիայի դերը լուսանկարների փաստերն ու ներկա դաշտի կառուցվածքը:

ուսուցչի համար

Չամգվածային լրատվամիջոցներ ասելով՝ մենք առաջին հերթին դատարանային հարցում ենք հիշում, որ դրված հեռուստացույցը, խոհանոցում միացված ռադիոն կամ բազմոցին մնացած թերթերն ու հանդեսները: Հեռուստատեսությունը, ռադիոն և մամուլը զանգվածային լրատվության ունեցող ավանդական լրատվության միջոցներ են: Դրանց այսօր միացել են նաև ինտերնետային լրատվամիջոցները: Ավելին, հիմա մեծ թվով մարդկանց լրատվություն կարելի է փոխանցել նաև այլընտրանքային միջոցներով՝ սոցիալական ցանցերով, բլոգներով, բջջային հաղորդագրություններով, հանրային վայրում դրված էկրանով և այլն: Փաստորեն, սրանք նույնպես զանգվածային լրատվամիջոցներ են: Լրատվամիջոցները հաճախ կոչում են նաև «չորրորդ իշխանություն», քանի որ դրանք մեծ ազդեցություն ունեն հասարակության ու հասարակական կարծիքի վրա: Ժողովրդավարական երկրներում, ուր գործում են խոսքի ազատությունն ու մամուլի անկախությունը, լրատվամիջոցները մեծ ազդեցություն ունեն նաև իշխանության մյուս երեք՝ գործադիր, օրենսդիր և դատական ճյուղերի վրա:

ՉԼՄ-ի ձևակերպումն ըստ «Չամգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 13-ին):

Հոդված 3. Հիմնական հասկացությունները

Ստորև բերված հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են հետևյալ նշանակությամբ.

1) զանգվածային լրատվություն (այսուհետ՝ լրատվություն)՝ անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածում, որի հիմնական մոտատակն է աղանդավել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն, անկախ ղեկավար սահմաններից՝ փնտրելու, ստանալու և տարածելու տեղեկություններ ու գաղափարներ:

Լրատվությունն իրականացվում է զանգվածային լրատվության միջոցի տարածմամբ.

2) զանգվածային լրատվության միջոց (այսուհետ՝ լրատվության միջոց)՝ լրատվություն իրականացնելու միջոց, որը բաժանորդագրությամբ կամ առանց դրա, վճարովի կամ անվճար հիմունքներով տարածվում է՝

- մշտական անվանում, հերթական համար և ամսաթիվ ունեցող տարբերակային թողարկումներով՝ նյութական կրիչի վրա, որոնց միևնույն բովանդակությամբ օրինակների քանակը տակաս չէ հարյուրից,
- հեռուստատառիտառողողմամբ,

- հանրային հեռահաղորդակցության ցանցով (ցանցային լրատվության միջոց) որդեհողությունների հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի և լրատվություն ներառող տեղեկատվական տառապարհի անկախ թարմացման տարբերակառնությունից, լրատվական ժամանակի տևողությունից և այլ չափանիշներից:

Լրատվության միջոց են նաև լրատվական գործակալության և մամուլատիրոջ բնույթի այլ կազմակերպությունների տարբերակառնող հաղորդումները՝ ուղղված լրատվական գործունեություն իրականացնողներին՝ անկախ տարածման ձևից, թողարկման օրինակների քանակից կամ որևէ այլ չափանիշից:

Մեդիայի մերկա դաշտը Հայաստանում

ՀՀ արդարադատության մախարարության տվյալներով՝ 2012թ. հունվարի դրությամբ լրատվամիջոցների վարչական ռեգիստրում հաշվառված է 1,199 լրատվամիջոց: Սա ճշգրտորեն չի արտացոլում դաշտում գործող լրատվամիջոցների թիվը, քանի որ կան հաշվառված ՉԼՄ-ներ, որ չեն գործում, իսկ մի քանիսը կարող են նաև հաշվառված չլինել: Հայաստանյան համակարգը բավական ազատ է. այն լրատվամիջոցներին չի տարտադրում գրանցվել:

Հայաստանում այսօր տղազրվում է 80-ից ավելի տարբերակառնող, օրաթերթերի միջին տղաքանակը, սակայն, չի անցնում 3000-ը: Խոշոր օրաթերթերն ունեն նաև ինտերնետային տարբերակներ: Բացի այդ, գործում են էլեկտրոնային տարբերակառնողներ՝ a1plus.am, tert.am, lragir.am, Armenianow.com, hetq.am, panarmenian.net, panorama.am, 1in.am...

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային համձնաժողովի 2012թ. Հաշվետվության համաձայն՝ 2012թ.-ին Հայաստանում գործել է 96 հեռուստաընկերություն, որոնցից 44-ը՝ եթերային, 52-ը՝ մալուխային: Եթերայիններից 8-ը հանրադատական սփում ունեն (հեռարձակվում են ՀՀ-ի ողջ տարածքում), 10-ը գործում են միայն Երեւանում, մյուսները՝ մարզերում:

Ռադիոկայանների թիվը 20-ն է Հայաստանում:

Հեռուստառադիոընկերությունները լինում են մասնավոր, հանրային, ղեկավար, համայնքային: Տեսականորեն, մեզանից յուրաքանչյուրը, համադատասխան տեխնիկական, ծրագրային, մասնագիտական, ֆինանսական ղայանները բավարարելու և լիցենզավորման մրցույթում հաղթելու դեղքում կարող է մասնավոր հեռուստառադիոընկերություն հիմնել: Հանրային հեռուստառադիոընկերությունը ֆինանսավորվում է ղեկավար քույրեղից, այսինքն՝ քաղաքացիների գումարներով, և կառավարվում է հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից: Այլ կերպ ասած՝ հանրային հեռուստառադիոընկերությունը ղատկանում է մեզ՝ հանրությանը, և հաշվետու է հանրությանը: Եթե մասնավոր հեռուստառադիոընկերությունները կարող են ունենալ մեղ ուղղվածություն, աշխատել փոքր լսարանի համար, և դա հիմնադրի ցանկությունն է, աղա հանրայինը ղարտավոր է բավարարել հանրության տարբեր շերտերի հետաքրքրությունները, ունենալ հաղորդումներ եւ երեխաների, եւ մեծերի համար, աղա հովել անաշառ լրատվություն, հեռարձակել մշակութային, կրթական, ճանաչողական ծրագրեր:

Դիտարկենք արտասահմանյան մի քանի հեռարձակող ընկերությունների օրինակներ: Մեծ Բրիտանիայում ԲիԲիՍի (BBC) հեռուստաընկերությունը հիմնադրվել է մասնավոր ընկերության կողմից, բայց մի քանի տարի անց թագավորական կանոնադրությամբ ու որոշմամբ դարձել է հանրային. այդ կանոնադրությունն է սահմանում ընկերության առաքելությունն ու նղատակները: ԲիԲիՍի-ն կառավարվում է հոգաբարձուների խորհրդի կողմից, իսկ հոգաբարձուներին մշանակում է միաղետը՝ մախարարների խորհրդով: ԲիԲիՍի-ի քույրեղն հիմնականում ձևավորվում է հատուկ հարկատեսակից, որ վճարում են բոլոր նրանք, ովքեր դիտում են ԲիԲիՍի-ի եթերը՝ հեռուստացույցով, համակարգչով

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԱԵԴԻԱԸ

- 80-ից ավելի թերթեր
- 44 եթերային հեռուստաընկերություն
- 52 մալուխային հեռուստաընկերություն
- 20 ռադիոընկերություն

Անդիա բառարան

լրատվամիջոց

տողագրություն

հեռարձակում

էթեր

հաղորդում

հաճախություն

լիցենզավորում

թվայնացում

գործակալություն

կամ որևէ այլ սարքով: Ընկերությունն ունի մի քանի հեռուստառադիոալիք, որոնք միասին աղահովում են հաղորդումների բազմազանությունը՝ դասական երաժշտությունից մինչև լուրեր, մուլտեր, սերիալներ ու ռեալիթի-շոուներ...

ՓիԲիես-ը՝ (PBS) Համրային հեռարձակող ծառայությունը, ԱՄՆ-ի համրային հեռուստատեսային ցանցն է, որը ողջ երկրի տարածքում ունի ավելի քան 350 կայան: Ծրագրերի կազմման, լուրերի ընտրության հարցում կայանները անկախ ու ինքնուրույն են: Բայց բաղաբաղակալությունը նույնն է՝ բավարարել հասարակության տարբեր խավերի հետաքրքրություններն ու դահանջները, այդ թվում նաև հեռարձակելով հաղորդումներ ազգային փոքրամասնությունների լեզուներով:

Հայաստանի համրային հեռուստառադիոընկերության գործունեության կարգը, սկզբունքները սահմանված են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով (տե՛ս Հավելվածում): Ըստ այդմ՝ համրային հեռուստառադիոընկերությունը ֆինանսավորվում է ՀՀ բյուջեից, կառավարվում է համրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից, որի անդամներին մշահակում է ՀՀ մախագահը:

Իսկ մասնավոր հեռուստառադիոընկերությունները կարող են գործել միայն լիցենզիա ունենալու դեպքում: Լիցենզավորման մրցույթներն անցկացնում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային համձեռնաժողովը: Այս կերպ մի քանի տարին մեկ բաշխվում են ազատ հաճախությունները:

Մինչև 2015 թվականը Հայաստանը ղետոք է անցնի թվային հեռարձակման. հեռարձակումը կլինի թվային ազդակների միջոցով, որոնք ընդունող սարքերը (հեռուստացույցները) կադակողավորեն: Թվայնացումից հետո կավելանան հաճախությունները, և կկարողանանք ավելի մեծ թվով ալիքներ դիտել: Պատկերն էլ կլինի ավելի դարգ ու որակյալ: Թվային հեռուստաալիքները դիտելու համար հեռուստադիտողները կան ղետոք է թվային հեռուստացույցներ գնեն, կան հին սարքերին կցեն փոխարկիչներ, որոնք կադակողավորեն թվանշային ազդակներն ու կվերարտադրեն: Հայաստանում փոխարկիչները 150.000 անադահով ընտանիքների կտրվեն անվճար, մյուսները դրանք ստիղված կլինեն գնել:

Հայաստանում գործում են եւ մասնավոր, եւ համրային հեռուստառադիոընկերություններ:

Թեև համրային հեռուստառադիոընկերությունները շատ հաճախ ոչ ղաշտոնադես վերահսկվում են իշխանությունների կողմից, որոշ երկրներում կան նաև ղաշտոնադես ղետոյանը ղատկանող հեռարձակող ընկերություններ: Օրինակ՝ Ռուսաստանի ղետական հեռուստատեսությունը՝ «Ռոսիա»-ն, Ադրբեյջանի ղետական հեռուստատեսությունը և այլն...

ԱՄՆ-ում ևս կան իշխանություններին ղատկանող ալիքներ, օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ալիքները, որոնք կաղ են ստեղծում տեղական իշխանության և հանրության միջև: Սրանք փոքր կայաններ են ու չեն հավակնում փոխարինել համրայինին: Բացի այդ, դրանք հաճախ մալուխային են՝ մալուխով են փոխանցում ազդակները, և մարդիկ ղետոք է բաժանորդագրվեն՝ դրանք դիտելու համար:

Գոյություն ունի նաև համայնքային հեռուստատեսություն կան ռադիո: Սա ավելի տարածված է երկրներում, որտեղ մեկուսացած համայնքները չեն կարող որսալ հիմնական հեռուստառադիոալիքները: Համայնքային ՉԼՄ-ի կարևոր ղայման է, որ կայանը ղետոք է ղատկանի համայնքին՝ հենց համայնքի կողմից էլ դեկավարվի ու ֆինանսավորվի: Այս մոդելը գործում է Հնդկաստանում, Նեդալում, Բանգլադեշում...

Եվ իհարկե, այսօր արդեն շատ տարածված են ինտերնետային հեռուստատեսությունն ու ռադիոն, որոնք հեռարձակվում են ինտերնետով և շատ են տար-

բերվում ավանդականից: Այստեղ հեռուստադիտողն է որոշում՝ երբ որ հաղորդումը դիտել/լսել, նա կարող է արագացրած դիտել, մի քանի անգամ դիտել...

Մեդիա դաշտի մաս են կազմում նաև լրատվական գործակալությունները, որոնք բաժանորդագրությամբ լուրեր են տրամադրում կազմակերպություններին:

Կան նաև լրագրողական կազմակերպություններ, որոնք իրականացնում են դաշտի ուսումնասիրություններ, վերադաստիարակում դասեր, մեդիա արտադրություն և այլն:

ՀՈՒՇՈՒՄ

Հաջորդ թեման քննադատական մտածողությունն է. **ԹԵՄԱ 3-ում** աշակերտներն ուսուցչի օգնությամբ վերլուծում են տարբեր մեդիա նյութեր: Ուսուցիչը կարող է հաջորդ դասի մեջ մտնող «Ուսուցչի համար» հատվածը նախադաս բաժանել աշակերտներին, որոշեազի նրանք դասին ու քննարկումներին ավելի դաստիարակված զան:

ՀԱՎԵԼՎԱԾ ԵՒ ՀՂՈՒՄՆԵՐ

- 1 Медиа-ландшафты стран восточного партнерства Երևանի Մամուլի ակումբ, 2011:
- 2 Այդին Մորիկյան, «Ժուռնալիստիկա. ինչ, ինչո՞ւ, ինչու», Երևան, 2008, Մուլտիմեդիա հավելված:
- 3 Ուսումնական ծրագրեր համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետների համար, <http://bit.ly/XxuNEX>
- 4 «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, Մուլտիմեդիա հավելված:
- 5 «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, Մուլտիմեդիա հավելված:
- 6 «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը, <http://bit.ly/YPqox7>
- 7 Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կայքը, <http://bit.ly/152rY20>
- 8 Ինտերնյուս ՀԿ-ի կայքը մեդիա դաշտի մասին, www.media.am
- 9 Երևանի մամուլի ակումբի կայքը, www.ypc.am

ԹԵՄԱ 3

ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՆՔ ՄԵԴԻԱՆ

ՎԱՅՐՎԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
«Մեդիայի քննադատական ընկալում՝ նայել, թե՞ դիտել» տես էջ ...

ՆՎԱՐԴ ՄԱՆԱՍՅԱՆ
«Սեփական սահմանումների ուժը», տես էջ ...

քայլ 1

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ

Աշակերտները դիտում և ուսուցչի օգնությամբ վերլուծում են Աուտիսմ-դիա հավելվածում ներկայացված տեսանյութերը կամ այլ նյութեր ուսուցչի ընտրությամբ: Ուսուցիչն օգնում է աշակերտներին քննարկման արդյունքում հասկանալ, որ տեղեկությունը միշտ չէ, որ օբյեկտիվ է: Այն հաճախ ունենում է թաքնված նոտատակ, փորձում է որևէ բան վաճառել կամ մարդկանց համոզել՝ որևէ բան անել:

(Եթերից նյութեր ընտրելիս ցանկալի է ընտրել այնոսիները, որ տարրունակում են՝

քարոզչություն – տեղեկություն, որ նոտատակ ունի որոշակի կարծիք ու դրական կամ բացասական վերաբերմունք ստեղծել որևէ անձի կամ երևույթի նկատմամբ,


միակողմանի տեղեկատվություն – իրադարձության, խնդրի լուսաբանում միայն կողմերից մեկի ներկայացմամբ կամ մեկնաբանությամբ,

թաքնված գովազդ – կազմակերպության կամ անձի գովաբանում, որը ներկայացվում է ոչ թե որդես գովազդ, այլ տարզադես լուր, տեղեկատվություն: Թաքնված գովազդի համար ՉԼԱ-ն վճարվում է, բայց այդ մասին չի տեղեկացնում սոցառոդին ու միտումնավոր կերպով մոլորեցնում է նրան,

թյուր վերնագիր – վերնագիր, որ նոտատակ ունի գրավել ընթերցողին, բայց բուն նյութին չի համադատասխանում...)

ՅԱՐՑԵՐ:

- Ի՞նչ ինֆորմացիա է լո՞ւր, կարծի՞ք, վերլուծությո՞ւն, ակնա՞րկ...
- Ո՞րն է ուղերձը:
- Ո՞վ է տատրաստել նյութը:
- Ո՞ւմ համար:



- Ի՞նչ նշանակություն ունի:
- Ի՞նչ մանրամասնումներ կան հնարքներ են օգտագործված:
- Ի՞նչ կարգեր են:
- Նշվում են ինֆորմացիայի աղբյուրները:
- Որքանով է հավաստի:
- Վրոյնք կա հեղինակի/հաղորդողի վերաբերմունքը, որքանով է այն տեղի...
- Ներկայացված են բոլոր կողմերը:

ՎԱՐՓՈՒԹՅՈՒՆ

Վշակերտները բնագրվում են ֆոտոմանրամասնների օրինակներ (տե՛ս Աուտլինեյի հավելվածը):

- Ի՞նչ է դասակարգված լուսանկարում:
- Ի՞նչ ազդեցություն է թողնում լուսանկարի մոնտաժը:
- Ի՞նչ նշանակություն ունի լուսանկարի աղավաղումը կամ մոնտաժը կամ լուսանկարի մակագրությունը:
- Ինչպե՞ս խուսափել թյուրընկալումից (դեռք է ինֆորմացիան ստուգել մի քանի աղբյուրից):

ՎԱՐՓՈՒԹՅՈՒՆ

Վշակերտները բաժանվում են 3-4 խմբի, ամեն խումբ կարդում և վերլուծում է մի հոդված: (Տե՛ս հոդվածների օրինակները Աուտլինեյի հավելվածում):

ՉԱՐՑԵՐ.

- Ինչի՞ մասին է հոդվածը:
- Ո՞վ է հեղինակը կամ ո՞ր դրամատուրգն է տրամադրված, արդյո՞ք դա որևէ բան ասում է:
- Ու՞մ է ուղղված հոդվածը:
- Չեղարկումը է որևէ թաքնված նշանակություն:
- Ներկայացված են տարբեր կողմեր:
- Որքանով է օբյեկտիվ ինֆորմացիան:
- Ըստ ձեզ՝ կա՞ն լրագրողական կանոնների խախտումներ:

Ուսուցիչն աշակերտներին բաժանում է 3 խմբի և հանձնարարում խմբային հետազոտական աշխատանքներ և կարճ զեկույցներ հաջորդ դասի համար: Ուսուցիչը կարող է նաև խմբերին բաժանել հաջորդ դասի տեսական հատվածն ու համադասախան օրենքները (օրենքների համար տե՛ս Աուտիմեդիա հավելվածը):

Հետազոտության թեմաներ

Խումբ 1 - Ի՞նչ է խոսքի ազատությունը. Պատմությունը, այսօրվա ընկալումն ու սահմանումը:

Խումբ 2 - Ի՞նչն է խոսքի ազատությունը կարևոր ժողովրդավարական հասարակության և քաղաքացու համար:

Խումբ 3 - Որո՞նք են խոսքի ազատության սահմանափակումները:

ամփոփում

Ուսուցիչն ամփոփում է դասը՝ աշակերտների հետ վերհիշելով քննադատական մտածողության հիմնական սկզբունքները:

ուսուցչի համար

Քննադատական մտեցում մեդիայի

Երբ մեծ-մեծ տատերով վերնագրված ու աչքի զարնող ձևավորմամբ հողվածուն ցնցող բացահայտումներ եք կարդում, մի շտապեք անմիջապես հավատալ ու Պատմել ընկերներին: Ստուգեք. արդյո՞ք նշված են տեղեկատվության աղբյուրները, արդյո՞ք այն, ինչ կարդում եք, փաստ է, թե՞ զուտ լրագրողի կարծիքը, ո՞վ է հաղորդել տեղեկությունը, և ի՞նչ միտում կարող էր նա ունենալ... Այս հարցերի դատախազները գտնելուց, այլ լրատվամիջոցներով նույն լուրը ստուգելուց հետո միայն կարելի է հետևություններ անել:

Քննադատաբար մտեցնել մեդիային նշանակում է **ևս մեկ անգամ մտածել** այն ամենի մասին, ինչ տեսնում, լսում ու կարդում ենք լրատվամիջոցներում: Այսինքն՝ քննադատորեն ընկալել ցանկացած մեդիա տեքստ: Մեդիա տեքստ ասելով՝ մենք հասկանում ենք ոչ միայն գրավոր շարադրանք, այլ նաև՝ ձայնագրություն, հեռուստատեսային հաղորդագրություն, գովազդ, երգ, ֆիլմ... Մեդիա տեքստը կարող է միաժամանակ Պարունակել մի քանի մեդիա լեզուներ ու ժանրեր՝ տեսողական, ձայնային, գրավոր...

Ցանկացած մեդիա տեքստ ունի մոդատակ և գործառույթ՝ տեղեկացնել, զվարճացնել, ծիծաղեցնել, հիասթափեցնել, ուշադրություն գրավել, համոզել, որևէ բան վաճառել...

Ցանկացած մեդիա տեքստ ներկայացնում է իրականության մի տարբերակ, այլ ո՛չ ամբողջական իրականությունը: Լրատվամիջոցը, ամենամեծ ցանկության դեղքում անգամ, չի կարող փոխանցել 100 տոկոսանոց իրականությունը, քանի որ մեդիա տեքստ դառնալիս նյութը մշակվում է, և հեռուստադիտողն այն տեսնում է լրագրողի, ռեժիսորի, օմերատորի, խմբագրի, տեսախցիկի դիտանկյունից:

Ըստ բննադատական մտածողության տեսարան Դեյվիդ Քլուսթերի՝

Քննադատաբար մտածել՝ նշանակում է անկախ մտածել:

Ինֆորմացիան բննադատական մտածողության սկզբնակետն է, ո՛չ թե եզրակետը:

Քննադատական մտածողությունը սկսվում է հարցերից ու խնդիրներից, որոնք լուծում են լուրջ հարցեր:

Քննադատական մտածողությունը ենթադրում է լուրջաբանական փաստարկներ:

Ի՞նչ անել, երբ մատուցվող տեղեկությունը միակողմանի է կամ ստացված է կասկածելի աղբյուրից: Տեղեկությունը կարելի է ստուգել մեկ այլ լրատվամիջոցում, աղյուսակներով տարբեր մեդիաների հաղորդած տեղեկությունները և փորձել հասկանալ իրականությունը:

Ցանկացած նյութ կարողալիս, դիտելիս, ղեկավարել բննադատաբար մտածելու. ո՞ր մեդիայով է այն տարածվում, ի՞նչ ուղղվածություն, շահեր ունի այդ մեդիան, ինչի՞ համար է այդ տեղեկությունը, օգտագործված է երաժշտություն, ի՞նչ լրացուցիչ հույզեր է առաջացնում երաժշտությունը, ի՞նչ կարգեր են օգտագործված, հայտնի՞ են տեղեկատվության աղբյուրները, քանի՞ աղբյուրից է ծշտված տեղեկությունը, կա՞ն հավաստի փաստեր, արդյո՞ք միակողմանի է ներկայացված տեղեկությունը....

Նդանադատական հասցեում համար՝ մեդիան կիրառում է որոշակի հնարքներ: Դրանք կարող են լինել այսպիսին.

- ընդհանրացում («բոլորն օգտագործում են...», «մասնագետները խորհուրդ են տալիս...»)
- համեմատություն («ձեր ատամները ձվի կեղևի ղեկ ամուր կլինեն...»)
- անձնավորում (անվանական գովազդ՝ հասցեագրված հենց քեզ)
- զգացմունքայնություն (հիասթափություն, ոգևորություն, ժողիտ, լաց...)
- հանրաճանաչ մարդկանց ներգրավում (երբ աստղերն են ներգրավվում ու փոխանցում հաղորդագրությունը)

Նաև՝

- երաժշտություն
- մոնտաժային հնարքներ
- լուսավորություն
- տեքստի կամ կարգի կրկնություն

Մեդիան կարող է նաև միտումնավոր շրջանառել որևէ թեմա՝ հասարակության ուշադրությունը գրավելու, թեման կարևորելու, հասարակական շարժ, ակտիվություն արթնացնելու կամ ինչ-որ խնդրի լուծում տալու համար: Մեդիայի միջոցով հնարավոր է նաև ուշադրությունը շեղել. օրինակ՝ եթե իշխանությունը քայլեր է ձեռնարկում, որոնք անընդունելի կարող են լինել հասարակության համար, նրան ձեռնադրել մեդիայի միջոցով մարդկանց «զբաղեցնել», ասենք, լուրերով:

Մեդիա
բառարան

մեդիա տեքստ

համատեքստ

մանիպուլյացիա

փաթեթավորում

րագմի, մշակութային որևէ իրադարձության կամ մեկ այլ թեմայով: Միշտ չէ, որ լրատվամիջոցները դիտավորյալ են ընտրում այս հնարքները. հաճախ լրատվամիջոցները իրենց հարցազրույցներով, մամուլի ասուլիսներով լրատվամիջոցներին հրամցնում են իրենց ձեռնառու թեմաները, որոնք հետո հայտնվում են եթերում կամ դարբերակամների էջերին:

Մանիպուլյացիոն այլ հնարքների մասին կարդա՝ «Մանիպուլյատիվ հնարքների «գիմանոցից» նյութում (տես Մուլտիմեդիա հավելվածը):

Մանիպուլյացիոն հնարքների ակտիվ կիրառությունն ակնհայտ է դառնում գովազդում:

Երբ էկրանին հայտնված երջանիկ դեմքով գեղեցկուհին շրջում է գլուխն ի ցույց դնելով X շամդունով լվացված չքնաղ մազերը, մի՞ շտապեք հաշորդ օրն իսկ գնել այդ ադրամքը՝ վստահ, որ ձեր մազերն էլ կդառնան գովազի հերոսուհու վարսերի ողես փայլուն ու գեղեցիկ: Հավանաբար, նրա վարսերը բավական երկար խնամվել են տարբեր միջոցներով, իսկ նկարահանումից հետո նաև համակարգչային մշակման են ենթարկվել՝ ձեզ համոզելու համար:

Քննադատաբար վերաբերվեք հոլովակին, ինչպես նաև մեդիայի որևէ տեսակով փոխանցվող տեղեկությանը. կասկածե՞ք, փորձե՞ք վերլուծել ու ստուգել ինֆորմացիան:

Հիշե՛ք, մեդիան իրականության վերադարձնում է, ունի օրիգինալ փաթեթավորում, գործում է հեղինակի անհատական ընկալման միջոցով, ունի նդատակ, որոշակի լսարան, ներառում է արվեստի ժանրեր՝ դատմվածք, նկարի վերարտադրություն, երաժշտություն, ֆիլմ, սերիալ, գվարձալի շուրներ, մարզական խաղեր: Այն բիզնես է, որը մայնամավորված է գովազդով, որն, իր հերթին, մայնամավորված է վարկանիշով:

ՀԱՎԵԼՎԱԾ ԵՒ ՀՂՈՒՄՆԵՐ

- 1 Մանիպուլյատիվ հնարքների գիմանոցից, հոդված ըստ ուկրաինական «Տելեկրիտիկա» ամսագրի, Մուլտիմեդիա հավելված:
- 2 Манипуляции сознанием в медиа: базовые понятия и приемы, Компанцева Лариса <http://www.prschool.kiev.ua/ru/156/lists/178>
- 3 С.Г. Кара-Мурза Манипуляция сознанием, <http://bit.ly/157B4Lo>
- 4 Ֆոտոմանիպուլյացիայի օրինակներ
Social media is lying about Burma's Muslim 'cleansing' <http://bit.ly/Mxwu0S>
(թե ինչպես մեդիան բոլորովին այլ լուսանկարներ ներկայացնում է որդես Բիրմայի մահմեդականների հալածանքների կադրեր)
Photo Tampering throughout history <http://bit.ly/nHwnEi> (հայտնի ֆոտոներ, որոնք իրականում համակարգչային միջամտության արդյունք են)
- 5 The Art of Close Reading, <http://bit.ly/JTxKZf>
- 6 Քննադատ, <http://media.am/critique>

Եթե ադորինի անտառահատում է իրականացվել կամ կաշառակերության դեղք է բացահայտվել, ադա նշանակություն չունի՝ անտառահատը կամ կաշառակերը սոցիալ-դեմոկրատ է, «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության ներկայացուցիչ, թե՞ քուրդ... Այսինքն, կարիք չկա անհարկի մատնանշել մարդու ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական դատկանելությունը, քաղաքական հայացքները, սեռական կողմնորոշումը, ֆիզիկական արատները կամ սոցիալական կարգավիճակը, եթե, իհարկե, դա եական նշանակություն չունի:

Եթե կենցաղային հողի վրա սղանություն է կատարվել, ադա մարդասղանի ազգությունն էական չէ: Դա կարող է էական լինել միայն, եթե սղանությունը կատարվել է ազգամիջյան հողի վրա:

ՀՎՐԳՎՆՔ ՄՎՐԴԿՎՆՑ ԱՆՁՆԱԿՎՆ ԿՅՎՆՔԻ ՆԿՎՏԱՎԱՔ

Մարդկանց անձնական կյանքը ղաշտոյանված է Սահմանադրութեամբ և օրենքներով: Խոսքն անձնական կյանքի աղօթիմի կամ անհարկի միջամտութեանն է վերաբերում: Բնականաբար, լրագրողներն ու լրատվամիջոցներն էլ ղետք է հարգեն մարդու անձնական կյանքի անձեռնմխելիութունը:

Սակայն այստեղ բացառութիւն կա. անձնական կյանքին միջամտութիւնը կարող է արդարացվել, երբ խոսքը վերաբերում է հասարակական հնչեղութիւն ունեցող խնդրի կամ հանրային դեմքերին, այսինքն մարդկանց, ովքեր կամավոր ձգտում են հասարակական ուշադրութեան: Դրանց թվում են քաղաքական և հասարակական գործիչները (ղատգամավորներ, նախարարներ, վարչաղետ, նախագահ...), շոու բիզնեսի, կինո և սղորտային աստղերը և այլն:

Մեկնաբանութիւնը հետևյալն է. մարդը կամավոր իրեն դրել է հասարակութեան ուշադրութեան կենտրոնում, այսինքն՝ ինքն է ընտրել իր նաաղարիը, և հասարակութիւնից միայն դրական արձագանքների սկնկալիք չէ, որ ղիտի ունենա: Ավելին, հասարակութիւնն ուզում է իմանալ, թե ինչ կյանքով է աղրում իր ընտրյալը. չէ՞ որ, ասենք, քաղաքական գործիչներն աղրում են նաև հասարակութեան վնարած հարկերի հաշին: Եվ եթե նա սիրուի ունի (իսկ դա, անշուշտ, նրա անձնական կյանքն է), աղա դա անղայման դառնում է հասարակութեան քննարկման առարկա...

Հայաստանի ՁԼԱ-ների Վարքականոնում այս էթիկական սկզբունքը ձևակերղված է հետևյալ կերղ:

4. Հարգանք մարդկանց անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ

Այս սկզբունքի ղահղանումը նշանակում է՝

4.1. հարգել և ղաշտոյանել մարդկանց անձնական կյանքի անձեռնմխելիութեան իրավունքը. հասարակական անհրաձեշտութեամբ կարող է արդարացվել միայն ղաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանութեան կամ հասարակական ուշադրութեան ձգտող մարդկանց անձնական կյանքին միջամտութիւնը,

4.2. այն դեղքում, երբ խոսքի աղատութիւնը հակասութեան մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատ-

վամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախադասությունը, և լատասխանատվություն է կրում իր վճռի համար,

4.3. առանձնադեպ նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրատարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են: Չգույշ լինել դեռահաս ամբաստանյալների, ինչդեպ նաև սեռական հանցագործությունների զոհերի, ինքնասպանություն գործած անձանց ինքնությունը բացահայտելիս,

4.4. ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրատարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ,

4.5. �ղահղանել անմեղության կանխավարկածը. մինչև դատաքննությունը՝ հանցագործության մեջ կասկածվողների անունները հրատարակելիս քննարկել դրա հասարակական անհրաժեշտությունը՝ հավասարակշռություն ղահղանելով անմեղության կանխավարկածի, հանցագործության մեջ կասկածվողների՝ արդար դատաստանի իրավունքի և հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքի միջև:

ՇԱՀԵՐԻ ԲՎԽՈՒՄԻՑ ԽՈՒՍՎՓՈՒՄ

Լրագրողը հրավիրվել է ընկերոջ ծննդյան տարեդարձին: Ջերմ, ընտանեկան մթնոլորտ է, բոլորը մի քիչ գինովցած են, ուրախ: Հյուրերի մեջ կա նաև մի նախարար, որը մույնդես հոբելյարի ընկերն է, նա կատակներ է անում և զավեշտալի դեղքեր ղատմում իշխանության կուլիսային կյանքից, աղա, գուցեն ոչ միտումնավոր, խոսում այն ճնշումների մասին, որ իրենց (այսինքն՝ կառավարության) կողմից բանեցվում է Ազգային ժողովի ղատգամավորների վրա՝ ըստ էության մարդկանց մի փոքր խմբի շահերը ղաշտղանող, բայց հասարակության համար անկարևոր մի օրենքի ընդունման հարցում:

Ինչ կարող է անել լրագրողը, որը փաստորեն հասարակական հետաքրքրություն ներկայացնող նման տեղեկություն է ստացել: Հրատարակելու դեղքում կկորցնի ընկերոջ վստահությունը, հնարավոր է՝ նաև ընկերությունն ընդհանրաղես, իսկ շիրաղարակելն էլ կնշանակի անտեսել հասարակական հնչեղություն ունեցող խնդիրը...

Այստեղ առկա է երկու կարևոր շահերի բախում՝ ընկերության շահը և

անաչառ տեղեկատվության հասարակական շահը: Ավելի վատ կլինի, և շահերի բախումն ավելի կխորանա, եթե խմբագիրն էլ ինչ-որ տեղից իմանա կառավարության այդ ճնշումների մասին և նույն լրագրողին հանձնարարի լուսաբանել այդ թեման: Նման դեղքերում խորհուրդ է տրվում ազնվորեն ասել խմբագրին, որ առկա է շահերի բախում, հրաժարվել խնդիրը լուսաբանելուց և խնդրել, որ այն հանձնարարվի մեկ այլ աշխատակցի:

Լրագրողները, մանավանդ Չայաստանի նման փոքր երկրում, միշտ բախվում են և բախվելու են նման իրավիճակների: Եվ ամեն դեղքում յուրաքանչյուրն ինքը լուրջ է վճռի, թե ինչին տալ նախադասությունը:

Շահերի բախումից խուսափելու սկզբունքը նշանակում է նաև.

- գործուղման շնեկնել այլոց հաշվին,
- նվերներ ու դարձակներ չընդունել տեղեկատվության աղբյուրներից,
- չզբաղվել ակտիվ քաղաքական գործունեությամբ, չանդամակցել որևէ կուսակցության,
- հրաժարվել թեման լուսաբանելուց, եթե այն ամռնվում է այնտիսի կազմակերպության, որում լրագրողը շահեր ունի...

Սակայն «Վաշինգտոն փոստ» թերթի կանոնագիրը սրանով չի սահմանափակվում: Այն ենթադրում է, որ թերթի վարկին կարող է վնաս հասցնել նաև լրագրողների հարազատների գործունեությունը, և ահա թե ինչ է ասում շարունակության մեջ.

«Լրագրողների հարազատները կարող են չենթարկվել այս կանոններին, սակայն լուրջ է ընդունել, որ նրանց ծառայողական դիրքը կամ մասնակցությունը նման իրադարձություններին՝ կարող են ամրվազն խաթարել մեր հեղինակությունը: Ընտանիքի անդամների կամ հարազատների գործնական և մասնագիտական կադերը լուրջ է հայտնի լինեն բաժնի դատասխանատուին»:

Ամփոփենք: Շահերի բախումից խուսափելը նշանակում է գործել այն-դեպ, որ լրատվամիջոցի անաչառությունն ու անկողմնակալությունը կասկածի տակ չառնվեն:

ՏԵՂԵԿԱԿՐԱԿՈՅՈՒՅՈՒՆ ԵՒ ՊՈՎԱԾԴԻ ՏԱՐԱԶԱՏՈՒՄ

ՉԼԱ-ներում գովազդը լուրջ է նշված լինի՝ կամ իր ձևավորմամբ և ներ-

կայացմամբ առանձնանա խմբագրական բովանդակությունից: Սա լսարանի հետ ազնիվ խաղի կանոններից մեկն է: Գովազդը երբեք անաչառ չէ, այն միշտ ասում է. «Ես լավն եմ, զնեք ինձ»: Ահա թե ինչու, հրատարակմանը հավատալու համար, լսարանը ղեկավար է համոզված լինի, որ այն բացահայտ կամ քողարկված գովազդ չէ կամ չի տարունակում գովազդի տարրեր: Այդ իսկ տատնամով, ցանկացած նյութ, որի դիմաց խմբագրությունը վճարվել է, ղեկավար է այդ մասին նշում ունենա:

Այս սկզբունքին անմիջականորեն ամենչվում է նաև գովազդատուներին առավելություն չտալու դաժնանքը, որը միշտ բախում է առաջացնում խմբագրությունների կոմերցիոն և ստեղծագործական բաժինների միջև:

ՍԵՎԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՎՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՐՎԱԴՐՈՒՄ

Սեփական սխալներն ուղղելն ու հրատարակումներում հիշատակված կամ դարձադառն շահագրգիռ անձանց դատասխանի հնարավորություն ընձեռելը որակյալ լրատվամիջոցի լավ վարքի սկզբունքներից մեկն է: Իհարկե, հերքման և դատասխանի իրավունքը սահմանված է նաև ՀՀ օրենսդրությամբ («Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 8), սակայն եթե անգամ դա չլիներ, լրատվամիջոցները սեփական նախաձեռնությամբ ղեկավար է մարդկանց այդ հնարավորությունն ընձեռելու դարտականությունը ստանձնելին:

Այդպես է, օրինակ, «Առավոտ» օրաթերթի էթիկայի կանոններում.

«Այն անձը կամ կազմակերպությունը, որի մասին նյութում բացասական կարծիք կամ մեղադրանք է հնչեցվում, հնարավորություն ունի «Առավոտի» նույն նյութում կամ հաջորդ օրերին տղազրվելիք նյութերում դարձաբանում կամ դատասխան տալ»:

«Առավոտ» թերթի կանոններ, կետ 2

Այդպես է սահմանված նաև Հայաստանի ՉԼԱ-ների էթիկայի Վարքականոնում:

Որոշ լրատվամիջոցներում, օրինակ՝ անգլիական «Գարդիան»-ում, սխալների ուղղումը դատարաստում է թերթի օմբուդսմանը կամ, այսպես կոչված, ընթերցողների խմբագիրը (խմբագրությունից անկախ մի ղաշտոնատար անձ, ով ընթերցողների շահերի ղաշտղանն է խմբագրությունում): «Գարդիան» -ի օմբուդսման Յան Մեյսի դատարաստած ուղղման մի օրինակով էլ ավարտենք այս բաժնի վերաբերյալ զրույցը:

Մենք առանց դիտավորության վիրավորել ենք լեյբորիստների գլխավոր վիփ Յիլարի Արմսթրոնգին՝ ասելով, թե նա համարյա կրկնակի մեծ է Պահպանողականների առաջնորդ Դեյվիդ Քամերոնից («Թորիներն առաջ են անցնում՝ մինչ Յամայքների ղալատը կռիվ է տալիս Բլերի դեմ», էջ 4, երեկ): Իրականում Քամերոնը 39 տարեկան է, իսկ Արմսթրոնգը՝ 60, այնինչ 39-ի համարյա կրկնակին համարյա 78 է անում:

Յան Մեյս «Քաց դուռ. ընթերցողների խմբագիրը ընթերցողներին»,

Երևանի մամուլի ակումբ, Երևան, 2006թ.

Այս բաժնի վերաբերյալ, որոշես օժանդակ գրականություն, խորհուրդ կտանք կարդալ նաև՝

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
2. «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք
3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք
4. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք
5. Իրավական ուղեցույց հեռարձակողների համար, «Ինտերնյուս», Երևան, 2004թ.
6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք
7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք
8. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի կիրառման նախադեղերը, Երևանի մամուլի ակումբ, Երևան, 2000թ.
9. Քաղաքական դաշարը և լրագրողի մասնագիտական բարոյականությունը, Երևանի մամուլի ակումբ, Երևան, 2000թ.
10. Կլոդ-ժան Բերտրան, «Մամուլի ազատության դաշտում տրանսպարենտության երաշխիքներ. լրատվական էթիկայի և դատաստանատվության համակարգեր», Երևանի մամուլի ակումբ, Երևան, 2000թ.
11. Չանգվածային տեղեկատվության բնագավառը եվրոպայի խորհրդի փաստաթղթերում (երկրորդ՝ լրացված

հրատարակություն), Երևանի մամուլի ակումբ, Երևան, 2003թ.

12. Տատյանա Ռեդկովա, «Նոր ժամանակներ. ինչդեպ ստեղծել դրոֆեսիոնալ լրագիր ժողովրդավարական հասարակության դայնամներում», Երևանի մամուլի ակումբ, Երևան, 2003թ.
13. Չանգվածային լրատվության միջոցներ. օրենքներ և դրակտիկա (Եվրոդա, Ամերիկա, Ավստրալիա: Ուսումնասիրությունը նախատրաստել է «Article XIX» միջազգային ոչ կառավարական կազմակերպությունը), թարգմանիչ՝ Մեսրոպ Չարությունյան, Երևան, 1999թ.
14. Էրիկ Ֆիլթեյլիուս, «Լրագրության 10 ոսկե դատվիրան», թարգմանիչ՝ Մեսրոպ Չարությունյան, «Ինտերմյուս», Երևան, 2001թ.
15. Յան Մեյս, «Բաց դուռ. ընթերցողների խմբագիրը ընթերցողներին», Երևանի մամուլի ակումբ, Երևան, 2006թ.
16. Այդին Ադրիկյան, «Ժողովրդավարական. ինչ, ինչդեպ, ինչու», Երևանի մամուլի ակումբ, Երևան, 2006թ.
17. Այդին Ադրիկյան, «Ժողովրդավարական. ինչ, ինչդեպ, ինչու. բնագրեր», Երևանի մամուլի ակումբ, Երևան, 2006թ.

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ. ՍԵՓԱԿԱՆ ՍԱՐՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԸ

ՆՎԱՐԴ ՄԱՆԱՍՅԱՆ

սոցիոլոգ

«Յիմարն ու իմաստունը միևնույն ծառին սարքեր աշխույժ են նայում»:

Վիլյամ Բլեյք

Մի ուսուցիչ զարմանքով նշում էր, որ նախակրթարանում գրատախտակին նկարած կետի մասին հարցը, թե ի՞նչ կարող է այն նշանակել, երեխաներին այնքան է խանդավառում, որ սենյակը մտքերի տարափից ճայթում է: Մինչդեռ միևնույն հարցը վեցերորդ դասարանում լռության է արժանանում: Մանկավարժը տարակուսում է. ի՞նչ է դատահում կարճ ժամանակահատվածում, որ մտքերն անհետանում են: Այդ հռետորական հարցը նա առաջին հերթին ուղղում է մանկավարժական համայնքին, առաջին բոլոր մեծերին, ովքեր երեխաների սոցիալացման առաջնային դատաստանատուներն են, լինի դա տանը, դասարանում թե հեռուստատեսությամբ: Արդյո՞ք հնարավոր է քանդել լռության գործարանի հանգույցը, որը հաճախ հասուն տարիքում ուղեկցում է մեզ ու, ներքին ճայնի վերածված, հուշում. «Սա անել չես կարող: Անկարելի է: Արգելված է: Նման բան լինել չի կարող»:

Բոլորս մեր հուշերում ունենք ուսուցիչներ, ովքեր մեծ հետք են թողել մեր կյանքում, ում հիշում ենք ջերմ ժողովուրդ ու շնորհակալության զգացումով: Իհարկե, իրենք տիրապետում էին դասավանդվող առարկային, բայց մեր հիշողության մեջ նրանց մնալը դայմանավորված չէ լավ մատուցված ու վերադասված Ավարայրով կամ Թալլեսի թերեմայով: Իրենց հաջողվել է մեզ տանել իրաջքների աշխարհ, դարձնել դատարանական իրադարձությունների մասնակիցն ու դրանց դատմիչը, մեր առջև բացել դասագրքում մատուցված նյութի վերաիմաստավորման հանույթը, օգնել զգալ գիտական հայտնագործության բերկրանքն ու դրա գաղտնիքը:

Վաղ մանկությունից մենք յուրացնում ենք գիտելիք, վարքագծի կանոններ, դիտարկում շրջակա միջավայրն ու մտանկամամբ յուրացնում մեզ շրջադատող վարքուբարքը: Մենք դառնում ենք այդ անվերջ կրկնվող ծիսակարգի անբախտելի մասնակից: Չասունացմանը զուգընթաց՝ տարբեր ձևերով փոխանցվող նորմավորումները, մասնավորապես՝ հնարավորն ու անհնարինը, կարելին ու անկարելին, թույլատրելին ու արգելվածը, երևակայական «որդես կանոն» շրջանակմամբ՝ սահմանափակում են մեր ընկալումներն ու մեղացնում մտահորիզոնը՝ հաճախ դարձ խնդիրները դարձնելով անլուծելի: Այս նորմավորումներն անհիմն չեն և դեռ լինում են յուրացված, սակայն ոչ որդես բացարձակ ու անանցանելի ճշմարտություններ, այլ քննադատական մտածողության դիդակ-

Դասարանում

աշակերտներին բաժանեք խմբերի և տրամադրեք մի շարք մեդիանյութեր, օրինակ՝

- ՅոՒՏՅՈՒՆ «Վաճառք» օրաթերթից
- ՅոՒՏՅՈՒՆ Iragir.am կայքից,
- ՅոՒՏՅՈՒՆ բլոգից
- ՅոՒՏՅՈՒՆ ակադեմիական էլեկտրոնային ցանցից
- ՅոՒՏՅՈՒՆ Վիճակագրության
- ԲԻԲԻՍԻ մեդիակորպորացիայի ավերագրական ֆիլմ
- ՅուՒԹՅՈՒՆ (YouTube) տեղադրված վավերագրական ֆիլմ
- և այլն

Հանձնարարեք, որ աշակերտներն իրենց խմբերում փորձեն լրացնել հետևյալ հարցերին.

1. ո՞վ է հեղինակը,
2. որն է մեդիանյութի բովանդակության նպատակը, այն ինչ և ինչու է ուզում փոխանցել,
3. ինչո՞ւ է ձևավորվել տվյալ մեդիանյութը, որոնք են եղել վերջինիս արտադրության փուլերը և այլն:

տիկ նյութեր, որոնց միջոցով երեխային կփոխանցվեն դրանց ձևավորման օրինաչափությունները:

Նորմավորումները գիտելիքի կամ հմտությունների տեսքով գոյանում են, որոշե՞լի կարգավորեն և կանխարգելեն կյանքի ու բնականոն գործունեության համար վտանգավոր վարքագիծը: Դրանք ձևակերտվում են տվյալ համատեքստում, տվյալ ժամանակահատվածում, որոշակի մարդկանց խմբի կողմից և դառնում են այդ խմբի (ընտանիք, ընկերներ, դասարան, ցեղ, ազգ, կրոնական համայնք և այլն) ինքնության անբաժան մասն ու բնութագրիչը՝ վերջինիս կենսագործունեության գրավականն ու մշակույթի առիթավառն: Սակայն դասարանում մեջքիչ չեն այն իրադարձությունները, որոնք ճակատագրական են եղել տարբեր խմբերի համար: Վերջիններս չեն կարողացել վերացարկվել սեփական նորմավորումներից և գործածել դրանց օրինաչափության ուժը: Վերացել են մշակույթներ ու լեզուներ, ազգեր ու դասեր, որովհետև այլոց թվում չեն կարողացել ամբողջով իրականության հետ: Այդ անկարողությունների արմատը թաղված է լայն իմաստով սոցիալացման մեջ և մասնավորապես կրթական համակարգերում, լինի ՅՈՒՆԵՍԿՈՒՆԻ Խիստ նորմավորված կրթական համակարգով բարձրաշխարհիկ մարդկանց զավակների համար նախատեսված կրթությամբ, թե՛ մեքսիկական Տենոչտիտլանը՝ նախնիների կուտակած գիտելիքը նոր սերնդի ընտրյալներին մուսուլմաններ փոխանցելու՝ տաճարականների թելադրանքով: Նույնիսկ դարձյալ իրադարձություններում, օրինակ՝ այլ երկիր ճամփորդելիս, մարդը բախվում է իրադարձությունների, որոնք այլ՝ հաճախ սեփական մշակույթից 180 աստիճան տարբերվող լուծում են ստանում: Դա, իհարկե, ցնցում է, բայց նաև՝ նոր հնարավորություն է ընձեռում:

Ուսուցչի խնդիրն է՝ սովորողին այնպես նախադասարանել իրական կյանքի ցնցումներին, որ հնարավորինս նվազեցվեն վախի ու ազդեցիկ վարքագծի առաջացման հավանականությունները: Դրանց նախադասարանելու համար օգտակար են սինուլացված՝ կեղծ ցնցումները կամ այդ ցնցումների մասին երկրորդային մտորումներն ու քննարկումները: Դրանք կարող են սկսվել տարբեր վարժանքներից, որոնցից մեկը՝ բավական հանրաժանող, ներկայացվում է ձեր ուշադրությամբ: Երջանակում ներկայացված է հայտնի գլոխկոտրուկը: Այն նախադասարանելու համար կարող է ինքնուրույն փորձել, առաջարկել լսարանին: Առաջին հայացքից՝ առաջադրված խնդիրը լուծում չունի: Բայց նայալու, երևանալու սահմանները նկատելու դեպքում խնդիրն անմիջապես լուծում է գտնում: Ավելին, դասարանականությունները վերանայելու դեպքում հնարավոր է դառնում գտնել լուծման ամենաբարենդաստ եղանակը: Այս խնդիրը ցույց է տալիս, թե ինչո՞ւ են կանոններն ու շրջանակներն ար-

գելակում ազատ մտածողությունը, այն մտածողությունը, որին հաճախ անվանում ենք քննադատական: Քառակուսուց դուրս մտածելու, տեքստից անդին տեսնելու, առաջարկված խճանկարը վերադասավորելու կարողությունները խոսում են մտազործունեության բարձրակարգ հմտությունների մասին: Դրանք մատնացույց են անում անհատի կողմից առկա օրինաչափությունները բացահայտելու, ադա դրանք այլ օրինաչափության ենթարկելու կամ սխալը տեսնելու կարողությունը: ժամանակակից աշխարհում գրագիտությունն այլևս չի սահմանվում գրել-կարդալու իմացությամբ: Տեղեկատվական հեղափոխության ու տեխնոլոգիական առաջընթացի լայնմաններում, իմացությունն առանձին վերցրած՝ արժեք չունի: Այն առկա տեքստերն ազատ ու տրամաբանված գործածելու քննադատական կարողությամբ է արժանանում ուշադրության և տվյալ մարդուն դարձնում գլոբալ վերաիմաստավորման մասնակիցն ու մեդիականացված անհատը, ով Գուգլ (Google) որոնողական օվկիանոսում նավարկում է՝ 15-րդ դարում նոր աշխարհը հայտնագործած նավադետների վարդետությամբ: Թվանշանային գրագիտության տեսանկյունից՝ գրելն ու կարդալը կարևոր տարրեր են, սակայն այս դեղքում լատկերն ավելի մեծ է: Դիտարկման առարկան հաղորդակցական հոսքն է, որտեղ բացի տառային ու թվային նշանային համակարգերից, ներառվում են նաև լատկերներն ու հնչյունները՝ ընդլայնելով տեքստի սահմանումը: Արևմուտքում, 60-ականների սերնդի համար հեռուստատեսության մուտքը նշանավորեց հաղորդակցության նոր շրջան, երբ կարևորվում էր վիզուալ գրագիտությունը՝ որակյալ տեքստն անորակ դրոդազանդիստականից տարբերելու համար: Դրան հաջորդեց գրադարանային որոնողական համակարգերի ստեղծումը, որը ձևավորեց տեղեկատվական գրագիտության լատհանջը, ադա 80-ականների կաբելային հեռուստատեսությունը ծնեց մեդիադրագիտության անհրաժեշտությունը, որը մարդկային հմտությունների նոր տեսակի լատհանջ էր գոյացրել: Մանկավարժներն այն հաճախ անվանում են միջնակութային հմտություններ:

Վերջադես 90-ականներին արագ տարածում գտած համակարգիչներն ու նոր հազարամյակում թափ առած որոնողական համակարգերը, ինչդես նաև սոցիալական ցանցերը գոյացրին համակարգչային գրագիտության ու թվային քաղաքացիական հմտությունների հրամայականը՝ սոցիալական հմտությունների համախումբ՝ ուղղված կիբերհարձակումներից լաշտոդանությանը, մտավոր սեփականության նկատմամբ հարգանքին, տեքստերի տեսակաորակավորմանը և դրանց հետ օղտիմալ աշխատանքին: Յետխորհրդային դետությունները, այդ թվում նաև Յայաստանը, վերոնշյալ հմտությունների ձևավորման համար 40 տարվա փոխարեն 20 տարում դիտի ձևավորեին թվանշանային անհրաժեշտ հմտություններ: Դրանք ներառում էին (ա)-

տեքստերի, գործիքների ու տեխնոլոգիաների գործադրման հմտությունները յուրացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում նաև ժամանցի նդատակով, (բ)քննադատական մտածողության հմտություններ, վերլուծելու ու գնահատական տալու կարողություններ, (գ)տարբեր հաղորդագրություններ, կարճ տեքստեր կազմելու հմտություններ ու դրա համար անհրաժեշտ ստեղծագործականության ամկայություն, (դ)կատարածն ու յուրացրածը վերահիմաստավորելու, ևս մեկ անգամ գնահատելու և էթիկական հարցեր տալու կարողություն, (ե)հանրային կյանքում անձնադեմ ու խմբերում ակտիվ մասնակցելու ու դիրքորոշում որդեգրելու կարողություն: Սակայն մինչ հանրային կյանքում գիտակից մասնակցության ադահովումը՝ դրդոցում սովորողին դիտի ցույց տան տեղեկատվական՝ հաղորդակցական հոսքերի հետ գրագետ աշխատանքի տարրերը, որդեգրի նա կարողանա եղած տեղեկատվության հիման վրա ճիշտ որոշումներ կայացնել: Այս ամենի առանցքում որևէ տեքստի արժանահավատության ու որակի գնահատման հիմնարար կարողությունն է, որը թույլ է տալիս արագ զտել շիավասարակշռված, միտումնավոր շեղումներով, քարոզչական կամ ցածրորակ նյութերը: Հանախ համացանցում բանալի բառերով որոնման առաջին իսկ արդյունքները դառնում են յուրացվելիք տեղեկատվության նյութ: Այս դեղքում որոնումը նենգափոխվում է սուբյեկտի առարկայացմամբ, քանի որ տեղեկատվությունն է գտնում համակարգչի առջև նստածին, այլ ոչ հակառակը: Իրավիճակն ավելի անկառավարելի է դառնում, երբ գտնված տեղեկությունը բացարձակ վստահությամբ՝ առանց քննադատական զննության յուրացվում է և մատուցվում մյուսներին: Այսդիսի դրսևորումների վառ օրինակ են ադատեղեկատվությունները կամ ադատեղեկատվական կատակները, որոնք հանախ շրջանամվում են սոցիալական ցանցերում և թե՛ծ քննարկումների առիթ հանդիսանում: Նմանատիղ ծուղակներից խուսափելու համար սովորողները դետք է մի քանի հարցերի միջոցով դարձեն հաղորդակցական հոսքի արժանահավատությունն ու որակը: Շրջանակում առաջարկված վարժանքն աշակերտներին թույլ կտա աստիճանաբար ճնավորել թվանշանային գրագիտության հմտություններ, որոնց միջոցով իրենք կկարողանան արագ դասակարգել մեդիանյութերն՝ ըստ որակի ու արժանահավատության: Բացի այդ, հետագայում նաև կկարողանան հասկանալ արժանահավատության բարձրացմամբ դայմանավորված «լուռ գրաքննության» սահմանափակումները, երբ այս կամ այն կորդորացիայի արժեքային համակարգով դայմանավորված՝ հաղորդակցական հոսքերը որոշակի շեշտադրված երանգներ են ձեռք բերում: Ավելին, արտադրության փուլերի գնահատմամբ՝ աշակերտները կարող են դատել աղբյուրի անկախության աստիճանի մասին՝ հիմք ընդունելով ֆինանսավորման աղբյուրները և այլն: Հետագայում, բավականին հմուտ ու գրագետ օգ-

տատերը կկարողանա տարբեր աղբյուրներից գոյացած մեդիանյութի (տեքստի) համադրության միջոցով դուրս բերել ավելին և վերհանել օրինաչափությունների նոր մակարդակներ: Տեղեկատվությունն ունի որոշակի զին, ղայնանավորված արտադրական փուլերով ու ինքնարժեքով, բայց նաև՝ որոշակի արժեքներով: Անդիանյութի արտադրողները՝ փոքր ճարգային տղագիր մամուլից մինչև գլոբալ հեռուստահեռարձակող կորպորացիաներ, դավանում կամ չեն դավանում այդ արժեքները: Բնական է, որ այդ ինքնարժեքը որոշակի շուկայական զին ղիտի ունենա ու ենթարկվի ղահանջարկի ու առաջարկի կանոնների: Հետևաբար, շուկայում հայտնված որևէ մեդիանյութ, լինի դա հողված, բլոգային փակցվածք կամ հեռուստահաղորդում, ղիտի սղամվի: Ենթադրվում է, որ մենք ղետք է զննենք այն: Նշանակում է՝ այն մեզ ակամայից ղետք է մղի որոշակի կենսական կամ մտավոր գործողությունների: Իրադրության տերը դամնալ կարող են միայն այն անձինք, ովքեր մեդիանյութի հետ աշխատելիս կկարողանան ղատասխանել այս երկու հարցերին: Առաջինը, ղե ինչ գործողության է մղում ինձ այս մեդիանյութը: Երկրորդը, ղե ինչ է ուզում, որ ես մտածեմ և ինչու: Վերջին հարցը ղոյլ է տալիս դամնալ մեդիանյութի զիտակից օգտատեր: Այս դեղքում օրվա ընթացքում տեղեկությունները փոխանցողի՝ հաղորդակցական խողովակի դերակատարությամբ, նա օգտատիրոջից վերածվում է սեփական մեղիաքաղաքականությամբ օտված անհատի: Նման անձը դամնում է մեղիաղաշտի ձևավորման ղատվիրատուն ու ՁԼԱ-ի ներքին քաղաքականության ազղակը՝ դրանով իսկ հաստատելով իր քաղաքացիական հիմնարար իրավունքը:

ՄԵԴԻԱՅԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ՝ ՆԱՅԵ՞Լ, ԹԵ՞ ԴԻՏԵԼ

Պե՞տք է արդյոք հիմնավորել քննադատական մտածողության անհրաժեշտությունը. լի՞ք է հիմնավորել, որ մայթին խորը փոսի հանդիմելիս լի՞ք է շրջանցել ու հարթ տեղով անցնել: Սովորական մի փոս շրջանցելիս՝ մենք այն համեմատում ենք հարևան հարթ մասի հետ, որտեղով անցնելիս ընկնելու վտանգի չենք ենթարկվի՝ հիմնվելով անձնական և ուրիշների փորձի վրա, օգտվելով տրամաբանության գործիքներից: Այսինքն, մտածում ենք քննադատորեն: Ի տարբերություն վերը հիշատակված ղարձիկային իրադրության՝ կենսական իրավիճակները բազմազան են, բացարձակ ճշմարտություններ, վարքի համընդգրկուն ուղեցույցներ չկան, ինչը նշանակում է, որ ճիշտ որոշումներ կայացնելու համար ոչ թե լիք է փորձել «անգիր» անել իրավիճակային լավագույն լուծումները, այլ զարգացնել քննադատական մտածողությունը՝ հարկ եղած դեղքում լուծումներն ինքնուրույն գտնելու համար:

Ամենից առաջ ճշտենք, որ քննադատական մտածողությունը չի նշանակում ամեն ինչի քննադատություն: Այն յուրատեսակ «որակի վերահսկողության բաժին» է, որդիսիք կային սովետական բոլոր գործարաններում (ОТК - отдел технического контроля), միայն թե՛ անձնական մակարդակում: Թվում է, այս զուգահեռը լիովին ղարձիկ է դարձնում քննադատական մտածողության կարևորությունը, բայց առանձին հարց է, թե ինչի համար է լիք տրատվամիջոցների, մեդիայի քննադատական ընկալումը: Առնվազն երկուսուկես հազարամյակ է, ինչ մարդկության խոշորագույն մտածողներն անդրադառնում են քննադատական մտածողության երևույթին, բայց բուն բառերը՝ «քննադատական մտածողություն» տերմինը, գոյություն ունի միայն XX-րդ դարի երկրորդ կեսից: Նույն շրջանում, երբ նախ ռադիոն, առաջ և հեռուստատեսությունը նվաճեցին լրատվական դաշտը, մերթափանցեցին բոլորի տները, իսկ թերթերը, տառաճանաչության անին զուգահեռ, բազմադասակեցին իրենց տղաքանակները: Փորձենք վերլուծել. ինչի՞ հետևանք է այս զուգահեռությունը:

Գլխավոր դատճառներից մեկը ես համարում եմ հենց լրատվամիջոցների զանգվածայնությունը: Քանի դեռ տեղեկատվության աղբյուրը միայն մամուլն էր, նրա տղաքանակը համարյա թե համընկնում էր գրագետ, կիրթ մարդկանց քանակին: Եթե նկատեցիք, ես «գրագետ» ու «կիրթ» բառերը որդես հոմանիշ օգտագործեցի՝ գրագիտությունը բնորոշելով որդես կարդալու և կարդացածը յուրացնելու հատկություն: Պատահական չէ, որ արևմտահայերենով «գրագետ» են կոչում գրող-

ներին, գրականության մարդկանց: Այս կողմից, «գրագետ» բառի հոմանիշն է «տառաճանաչ» բառը: «Տառաճանաչ», որ նշանակում է բացառապես կարդալու հնարավորությունը, բայց ո՛չ դրա սովորությունը կամ որակը: Եվ ահա, երբ XX-րդ դարի կեսերին տառաճանաչությունը դարձավ գրեթե համատարած, կրթությունը, սակայն, նույն արագությամբ շտարածվեց: Այս զանգվածը դարձավ տղազիր մամուլի սղամող: Նրանք, դեռևս ոչ տառաճանաչների հետ միասին, առանց որևէ ջանք թափելու դարձան նոր մեդիայի՝ ռադիոյի և հեռուստատեսության տեղեկատվություն սղամող, դեռևս զինված շլինելով քննադատական մտածողությամբ, որոշեցին կարողանալ լրատվական հոսքի մեջ իրականությունը տարբերել կեղծիքից, էականը՝ երկրորդականից և այլն: Առանց ունենալու այնպիսի խորհրդատուներ, ինչպիսին դրոճեստր Պրեբրադենսկին է Աիխայիլ Բուլգակովի «Շան սիրտը» վիպակում. «Եթե դուք մտածում եք ձեր մարտողության մասին, ճաշից առաջ... սովետական թերթեր մի՛ կարդացեք»¹: Յատկանշական է, որ երբ դրոճեստրի գրուցակիցն ասում է, որ ուրիշ թերթեր չկան, Պրեբրադենսկին խորհուրդ է տալիս ընդհանրապես թերթ չկարդալ:

1 М. А. Булгаков. Собачье сердце <http://bit.ly/Uj4gYc>

Արդյո՞ք սա գրական սուր հեզմանք ու չափազանցություն է: Թերևս, այդ իրավիճակը տևեց մինչև XX-րդ դարի կեսերը, քանի որ Ռուսաստանում (ՍՍՀՄ-ում), առաջ և հաջիզը Գերմանիայում՝ մարդկության տատանության ամենաարյունալի երկու վարչակարգերը, սկսեցին աննախադեռ չափերով օգտագործել քարոզչությունը (դրոճազանդան) ու նրա գլխավոր գործիքը՝ մեդիան, զոմբիացնելու համար իրենց երկրների քաղաքացիներին, նրանցից տատարաստելու համար սղամողության ու բռնությունների մեքենաներ: Մեդիան է եղել նաև Ադոլֆ Հիտլերի «Իմ դաշնալի» (Mein Kampf) գրքի ստեղծման դրոճազանդանը, ինչպես նա վկայում է գրքի առաջաբանում. «...ես տեսեցի Երկրի այն նողկալի առաստիները, որ հնարում էր հրեական մամուլը ինձ վարկաբեկելու նպատակով»²: Նույն տեղում նա համոզմունք է հայտնում, որ «մարդկանց համակրանքն ավելի հեշտ է գրավել բանավոր խոսքով, քան՝ գրավոր»: Եվ հիմնավորում է իր ասածը նրանով, որ «աշխարհի յուրաքանչյուր մեծ շարժում իր անի համար դարտական է մեծ հռետորներին, այլ ոչ թե՛ մեծ գրողներին»: Յետոսերի ու գրողների համեմատությունը խիստ վիճահարույց է, բայց մեդիայի հետագա զարգացումը ցույց տվեց, որ «բանավոր ու գրավոր» լրատվամիջոցներից իսկապես ավելի մրցունակ դուրս եկան «բանավորները»՝ ռադիոն ու հեռուստատեսությունը:

2 А. Гитлер. «Майн кампф» <http://www.litmir.net/br/?b=56599>

Պակաս ՅեՌԱՏԵՍական չէր նաև բուլղարիայի առաջնորդ Լեոնիդի հայտնի միտքը. «Բուրդ արվեստներից մեզ համար ամենակարևորը կինոն է»: (Ժամանակին «Յայֆիլմ» կինոստուդիայի տատին գրված այս միտ-

3 Г. М. Болтянский. Ленин и кино.
Москва, Ленинград:
Государственное
издательство, 1925, с. 19.

քը ավանդաբար կրճատ է մեջբերվել. «Քանի դեռ ժողովուրդն տառա-
ճանաչ չէ, բոլոր արվեստներից մեզ համար ամենակարևորը կինոն ու
կրկեսն են»³: Կինոն դեռևս համր էր, ինչն ընդգծում է, որ դասերը
«մարդկանց համակրանքը» շահելու առումով մրցում է ճայնի հետ: Յե-
տագայում, զանգվածային լրատվության միջոցներից մեկը միավորեց
ճայնը, դասերն ու կինոն, այն կոչվելով հեռուստատեսություն: Արայն
թե հեռուստատեսությունը, դա ցույց տվեց ժամանակը, «մեզ համար
ամենակարևորը» եղավ ոչ միայն այն ընթացքում, երբ ժողովուրդը
տառաճանաչ չէր, այլ նաև՝ համատարած տառաճանաչության
դարագայում: Այն անկարևոր է դարձնում ոչ միայն տառաճանաչու-
թյունը, այլև «գրագիտությունը»՝ կրթվածություն իմաստով, գիտելիքի
փոխարեն տալով տեղեկություն, մտավոր ջանքերի տեղ՝ մատուցելով
դատրաստի դատասխաններ, նաև կատարելով «կրկեսի» դերը՝
հռոմեական «հաց և զվարճություններ» փայթեթից ամբոխին տալով
անհրաժեշտ զվարճալի հաղորդումներ, շոուներ, սերիալներ:

Ամփոփելով անդրադարձը քարոզչական երկու հզոր մեքենաներին,
դետք է նշել, որ թե՛ ՍՍՀՄ-ում, թե՛ նացիստական Գերմանիայում չէին
բավարարվում «աղագա» մեդիայի վերաբերյալ կանխատեսումներով.
Երկու երկրում էլ հրեշավոր սահմանափակումներ էին իրականացվում՝
խստագույն գրաքննություն, լրագրողների սղանություն ու արտաքսում,
հրատարակության արգելք և այլն:

Այս վարչակարգերին զուգահեռ՝ Արևմուտքում զարգանում էր անկախ,
մրցակցային լրատվությունը, և ձևավորվում էր երրորդ՝ ավելի մեղմ ու
նկուն քարոզչական մեքենան՝ ամերիկյանը: 1950-ական թվականնե-
րին աշխարհում ծայր առավ աղագադրության գործընթաց, որը վե-
րացրեց անգլիական, ֆրանսիական, իսպանական ու դոմինիկյան
կայսրությունները: Ինքնուսուցվելով այն՝ ԱՄՆ-ը ՍՍՀՄ-ին, դահողաված
միակ՝ «Չարիքի կայսրությանը», հակադրեց լրատվական՝ մեդիա-ին-
դերիալիզմը: CNN-ը, NBC-ն, Associated Press News Agency-ն, «Ազա-
տություն», «Ամերիկայի ճայն» ռադիոկայաններն աշխարհով մեկ
քարոզում են ամերիկյան արժեհամակարգը, իսկ «Յոլիվուդը»՝ ադրելա-
կերողը: Իր փակ շուկան ստեղծելու փոխարեն, Վարչավյան տնտեսա-
կան համագործակցության անդամ սոցիալիստական երկրների նման,
ԱՄՆ-ը չի օգտագործում իր ազդեցությունն օտար տնտեսություններին
ադրանքներ դարտադրելու համար, այլ մեդիայի, զովագրի միջոցով
տարածում է իր մակնիշները: Coca Cola, Nescafe, Levi's, «Visa» credit
card, Orbit, McDonalds՝ այս մակնիշները, որոնք առաջադաս ջոկատ-
ներ, դիրքեր են գրավում ու նախադատարաստում «բանակի» մուտքը,
ամրագրում աշխարհում ամերիկյան բևեռի իշխանությունը, որը մեծիշ-
խանության վերածվեց ՍՍՀՄ փլուզումից հետո:

Պատահական չէ, որ ԱՄՆ-ում ստեղծվեց ու կատարելության հասցվեց հեռուստացույցը: Այն իր ակնդրից խելոք է, նրան ղատմում է ամեն ինչի մասին, ասում, թե ինչ գնի, որտեղ աղբի, ուր գնա հանգստանալու: Միևնույն ժամանակ, սակայն, այն դիտողից հիմար է. հեռուստատեսության ամենաքային արտադրանքներից մեկի՝ սերիալների հաջողությունը դայմանավորված է նրանով, որ լսարանն ավելի իրազեկ է, քան՝ սերիալի գործող անձինք (ով ում երեխան է, ով ում և ում հետ է դավաճանում...): Չուգահեռաբար, հեռուստադիտողը ենթարկվում է մշակման՝ գաղափարախոսական, գովազդային և այլն... Տեխնիկական զարգացման որոշակի փուլում հայտնվեց հեռուստացույցի «դուլտը»՝ հեռակառավարման վահանակը: Իսկական «հեռակառավարում»: Երբ շատ հեռու տեղում նստած մարդիկ կառավարում են մեզ:

Միացյալ Նահանգներում է ստեղծվել նաև նորագույն մեդիայի «գործիքը»՝ աշխարհի ամաչին, «Վրփամեթ» անունով համակարգչային ցանցը, որը կոչված էր ծառայելու ռազմական նդատակների՝ ատոմային դատերազմի դեղքում, հետագայում նաև համացանցը՝ նորագույն մեդիայի ասդարեզը: Եատ ժամանակ շդահանջվեց հասկանալու համար, որ համացանցային մեդիան մարդկությանն ազատում է հեռուստատեսության մենաշնորհից: Միևնույն ժամանակ, այն սդամողին բերեց նոր կախվածություններ, վտանգներ՝ կիրառելով ինչդես հին, այնդես էլ նոր միջոցներ:

Վերը շարադրվածը ցույց է տալիս, որ լինի բռնադետտական թե ժողովրդավարական համակարգ, մեդիան վերահսկվում կամ ուղղորդվում է՝ երկրի, իշխանության քաղաքական, տնտեսական շահերից էլնելով, որ «Մեդիայի զորությունը քաղաքական զորություն է», ինչդես համոզված է ամերիկահայ վերլուծաբան Բեն Զ. Բադդիկյանը⁴:

4 Ben H. Bagdikian, *The Media Monopoly*, Sixth Edition, (Beacon Press, 2000), pp.xv—xvi .

Մենք, իհարկե, կարող ենք ռադիո շլսել, հեռակառավարման վահանակին շդիոջել, համացանցում շլինել, թերթ շզնել (և շենք էլ գնում. մենք, մեն հաշվով, տդագիր մամուլ շսդամող հասարակություն ենք), ինչդես խորհուրդ էր տալիս դրոֆեսոր Պրեբբեմենսկին: Միևնույն է, տեղեկատվությունից խուսափելու հնար շկա: Նախ, մեդիան միայն լրատվամիջոցները շեն, «ուղերծներ» են դարունակում նաև գովազդային վահանակները, կոշադաստամները, ցուցանակները, հագուստն ու նորամնությունը և այլն: Երկրորդ, եթե ինքներս շենք օգտվում մեդիայից, այն մեզ փոխանցվում է տնեցիների, հարևանների, գործընկերների միջոցով: Այսինքն, կրկնակի միջնորդավորված: Ուրեմն, ավելի լավ է ընդունել մարտահրավերը՝ շիրամարվել մեզ «հեռակառավարող» որևէ մեդիայից, այլ փորձել գլուխ հանել, թե որ լրատվամիջոցին, դրանցից որ մեկի արհեստավարժությանն ու մղումների ազնվությանը

վստահենք: Մեղիան, որ միջնորդ է իրականության և մեր միջև, միջնորդավճար է վերցնում իր ծառայության համար, քանի որ ցանկացած լրատվամիջոց, հատկապես՝ հեռուստատեսությունը, խիստ ծախսատար է: Այդ ծախսերը մենք՝ լրատվական աղբյուրի սղառողներս, ողետք է փոխհատուցենք կամ շփոխհատուցենք: Հայաստանում 20-25 հեռուստատեսություն հանրային սփռման միջոցով, այսինքն, անվճար է հասնում հեռուստադիտողին, իսկ թերթերը հասանելի են համացանցում: Ուրեմն, ի՞նչ վճարի մասին է խոսքը: Մենք վճարում ենք հարկերի միջոցով, եթե խոսքը հանրային ՇԼՄ-ներին է վերաբերում, կամ, ողբալու, դիտելով, լսելով ու կարդալով՝ վարկանիշ ենք աղահովում մեղիային, ինչն իր հերթին նրան աղահովում է գովազդով, որը և մեղիայի ֆինանսավորման գլխավոր, հաճախ միակ աղբյուրն է: Ուրեմն, այս դեպքում մենք էլ կարող ենք հեռվից կառավարել մեղիան, եթե կատարենք ճիշտ ընտրություն՝ գերադասելով սղառել արհեստավարժ, անաշառ տեղեկատվություն: ճիշտ ընտրության դեպքում հնարավորություն է առաջանում, որ, որդես զրազետ սղառող, մենք ինքներս «հեռակառավարենք» մեղիան, քանի որ նրա վարկանիշը, այսինքն, սղառողների քանակը, վճարող է հետագա գործունեության համար:

Եթե մեղիան անընդհատ ընդլայնում է մեր ուշադրությունը գրավող միջոցների զինանոցը, մենք, սղառողներս նույնպես ունենք զինակիցներ: Քննադատական մտածողության համար միանգամայն բարենոյաստ են մարդկության ղատմության նոր՝ «ղոստմողեմնի» և «ղոստմողեմն իրավիճակի» փուլերը, որոնք նույն XX-րդ դարի երկրորդ կեսին հաջորդեցին «մողեմնին»՝ կտրուկ փոփոխությունների, փորձարարությունների, գաղափարական ծայրահեղ ժամանակի դարաշրջանին: Տեղը չէ խորանալու այս հասկացությունների մեջ, միայն, «ծայր աստիճան ողբազցնելով», ֆրանսիացի փիլիսոփա Ժան-Ֆրանսուա Լիոտարի խոսքերով բնորոշենք «ղոստմողեմնը»՝ որդես «թերահավատություն մետաղատումների նկատմամբ»⁵: Այսինքն, մեղիայի այսօրվա հասցեատերը հակված չէ սրբորեն հավատալու ղատմություններին, որոնց միջոցով փորձ է արվում միօրինակացնել հանրություններն ու ազգերը, օրինականացնել ղաշտոնական մշակույթը: Այսօրվա «կասկածատությունն», իհարկե, հատուկ է առաջին հերթին արևմտյան մարդուն, ով դասական հերթականությամբ անցել է հասարակական զարգացման փուլերը, բայց դրան ողետք է ձգտենք նաև մենք, որ քաղաքակրթական իմաստով ուղեմիշ ունենք եվրոպան:

Քննադատական մտածողությամբ զինվելը, «թերահավատություն», «կասկածատություն» ցուցաբերելու անհրաժեշտությունը չի նշանակում, որ մեր հարաբերությունները մեղիայի հետ «թշնամական» են: Տեղը տեղին լրատվամիջոցների վնասակարությունից վախենալուց հետո

5 Жан-Франсуа Лиотар.
Состояние постмодерна.
Москва Издательство
“АЛЕТЕЙЯ”, Санкт-Петербург,
1998, стр. 10.
<http://bit.ly/V5dzPj>

ծանոթանալով 20 դատախազին, որ արժանացել են մեդալին, ըստ քննադատական ընկալման խնդիրների մասնագետ, ամերիկացի Քրիս Ա. Վորսնոփի.

1. դատախազներին է, քանի որ մեդալին մեկնաբանում է անցյալը՝ մեզ ցույց տալով, թե ինչ է անցել-դարձել, որ այսօր մենք այստիպիսի ենք.
2. աշխարհագրությունն է, քանի որ մեդալին սահմանում է մեզ համար մեր տեղն աշխարհում.
3. հանրությունն է, քանի որ մեդալին օգնում է մեզ հասկանալ մեր շրջակա աշխարհի գործունեության կերպը և մեր անհատական դերերն այնտեղ.
4. գրականությունն է, քանի որ մեդալին դատախազներին ու զվարճանքի մեր հիմնական աղբյուրն է.
5. գրականությունն է, քանի որ մեդալին դառնում է, որ մենք տիրապետենք ու գործածենք քննադատական մտածողության հմտությունները.
6. բիզնեսն է, քանի որ լրատվամիջոցները լրջագույն արտադրություն են, որ ամխազելիորեն կառավարվում են ամերիկայում.
7. լեզուն է, քանի որ մեդալին օգնում է որոշել, թե ինչպես ենք մենք շփվում միմյանց հետ:
8. գիտությունն ու տեխնոլոգիաներն են, քանի որ մեդալին միշտ յուրացնում է ժամանակակից տեխնոլոգիական նորարարության վերջին խոսքը.
9. ընտանիքի հետազոտումն է, քանի որ մեդալին սահմանում է մեր մշակութային սննդակարգը և հյուսում է մեր կյանքի գործվածքի մի հատվածը:
10. շրջակա միջավայրի ուսումնասիրությունն է, քանի որ մեդալին նույնքան զգալի մասն է մեր առօրյայի, ինչքան՝ ծառերը, լեռները, գետերը, քաղաքներն ու օվկիանոսները.
11. փիլիսոփայությունն է, քանի որ մեդալին մեկնաբանում է մեր աշխարհը, նրա արժեքներն ու գաղափարները.
12. հոգեբանությունն է, քանի որ մեդալին օգնում է մեզ (թյուր)ըմբռնել ինքներս մեզ և ուրիշներին.
13. գիտությունն է, քանի որ մեդալին մեզ բացատրում է, թե ինչն ինչպես է լինում.

14. արդյունաբերական արվեստներն են, քանի որ լրատվամիջոցները խնամքով նախագծված, ձևավորված ու կառուցված աղբյուրներ են:
15. արվեստն է, քանի որ մեդիան մեզ հաճույք է տատանառում և ճաշակելու տալիս բոլոր արվեստներն ավելի, քան երբևէ հնարավոր է եղել որևէ դարաշրջանում:
16. քաղաքականությունն է, քանի որ մեդիան մեզ քաղաքական ու զաղափարական ուղերձներ է հղում անընդհատ, այո, անընդհատ.
17. հռետորական արվեստն է, քանի որ լրատվամիջոցներն օգտագործում են իրենց սեփական լեզվի ծածկագրերն ու ղայմանականությունները, որոնք մենք տեսնում ենք հասկանալի և վերահսկելի, իսկ եթե ոչ՝ մենք ենք հայտնվում նրանց կողմից վերահսկվելու վտանգի առաջ.
18. դրաման է, քանի որ լրատվամիջոցներն օգնում են մեզ հասկանալ կյանքը, այն մեզ ներկայացնելով որդես ավելի-մեծ-քան-կյանքը, և հարկադրում մեզ մտածել իրենց լսարանի հասկացություններով.
19. Էվերեստն է, քանի որ նրանք այնտեղ են.
20-րդ դարի առաջին կեսին, ՈՐ ԱՆՏՈՒՄԸ ԿԱՆ ԻՆՉ ԿՆՈՒՄ Է, ՈՐ-ՊԵՍՉԻ ՈՒՍՈՒՄԸ ԿԱՆ ԵՆՈՒՄ Է:⁶

6 Media Literacy Through Critical Thinking. Teacher Materials. By Chris M. Worsnop, 5 <http://bit.ly/V5dzPj>

7 Ֆիլիպ Գրեհեն (1915 - 1963) - «Վաշինգթոն փոստի» հրատարակիչ:

Կիսակատակ, բայց ավելի շատ լուրջ այս ցուցակին կարելի է ավելացնել կետեր կամ շիմամայնել որոշների ձևակերպման հետ. մի բան հստակ է, մեզանից յուրաքանչյուրը կարող էր սեփական ցուցակը կազմել, որտեղ կլինեն բազմաթիվ կետեր, թե ինչ է մեզ տալիս մեդիան: Ֆիլիպ Գրեհենը (1915 – 1963 թթ.), օրինակ, մեդիայի կարևորության ևս մեկ ձևակերպում է տվել. «Լրագրությունը ղատմության սևագրությունն է»⁷: Աստծո ամեն օր մեդիան տեղեկություններ է տարածում, որ վաղը դառնալու են ղատմություն, և նաև մեր ճիշտ ընկալումից է կախված նրա հավաստի լինելը: Բազմակարծության և շուկայական տնտեսության ղայմաններում լրատվամիջոցները բազմաթիվ են և առաջարկում են բազմազան տեղեկատվություն: Սա դժվարացնում է կողմնորոշվելը, բայց բազմազանությունը նաև մեդիայի հմայքն է՝ հնարավորություն է տալիս քննադատական ընկալման նոր օգնականներ ձեռք բերել: Այսինքն, նույն տեղեկությունը տարբեր լրատվամիջոցներ տարբեր կերպ են մեկնաբանում, ինչը մեզ թույլ է տալիս ընտրել մեկնաբանություններից մեկը կամ յուրաքանչյուր մեկնաբանությունից ընտրել մեզ բավարարող մասը: Չնարավոր է նաև, որ մեզ բավարարի, ավելի ղարժ՝ դուր

զա որևէ լրատվամիջոց, որը լիովին արտահայտում է մեր հայացքները: Մինչդեռ եթե երկրում լրատվության մենաշնորհ է, նշանակում է, որ ամենավերևում նստած է մեկը, ով կարծում է, թե ինքը գիտի ամբողջ ճշմարտությունը: Ի՞նչ կարող էին գրել, օրինակ, «Ստալինական սենցա», «Ստալինական զնամյա» թերթերը, որ լույս էին տեսնում «ամաչնորդի» կենդանության օրոք՝ միայն այն, ինչ հաճո էր իրեն՝ Ստալինին: Եվ ի՞նչ ընտրություն էր մնում ընթերցողին:

Այժմ փորձենք կողմնորոշվել մեդիայի բազմազանության մեջ՝ նյութերի ղատահական ընտրությամբ: Համեմատելով, դիցուք, օրաթերթերի նույն օրվա (12.09.12) միայն ամաչին էջերը:

«Առավոտ» օրաթերթի Գեղջկական շտեխություն խմբագրականում Արամ Աբրահամյանը գրում է.

«Միանգամայն ղատկերացնելի է, որ քաղաքակիրթ երկրի վարչադեպարտը կարող է այս կամ այն բիզնեսմենի հետ «օրթախ գործ բռնել», ինչդեռ որ մեր ղաշտոնյաներն են «մտած» Հայաստանում բոլոր քիչ թե շատ եկամտաբեր բիզնեսների մեջ:

Սակայն ես շատ ավելի վատ եմ ղատկերացնում, որ Ֆրանսիայի Ազգային ժողովի ղատգամավորը, ստանալով մանդատը, իր ամաչին գործը կհամարի շքեղ վերանորոգել այն կաբինետը, որը ղետությունը նրան տվել է ժամանակավորադեպ՝ ղատգամավորական ղարտականությունները կատարելու համար: Գեղջկական այդ շտեխությունն ամմիջադեպ աչքի կզարներ և կդառնար հասարակական լայն քննարկումների ամարկա»: <http://bit.ly/100utQj>

«Հայկական ժամանակը» Էդիկը «տոժում է» վերնագրով տեղեկացնում է, որ «օգոստոսի 8-ից 15-ը ՀՀ արտգործնախարարը շրջագայելիս է եղել Խաղաղ և Հնդկական օվկիանոսների մերձակայքում: Ամսի 8-ին նա եղել է Ինդոնեզիայում: Օգոստոսի 9-ին մեկնել է Նոր Ձելանդիա: Օգոստոսի 13-ին՝ Ավստրալիա: Օգոստոսի 15-ին նա արդեն Ֆիլիպիններում էր... Ֆիլիպիններից վերադառնալիս նա ցանկացել է ղաշտոնական այցով ժամանել Շրի Լանկա, սակայն այստեղ նրան շենք ընդունել... նման այց նախատեսված չի եղել, իսկ այդ երկրի դեկավարությունը տվյալ օրերին արձակուրդի մեջ է եղել»: Թերթի տարակուսանքն է հարուցել այն, որ արտգործնախարարը մարդասղան Ռամիլ Սաֆարովի արտահանձնման նախօրեին «Էկել էկել ենք, բա մի հատ շնտնենք...» տարբերակով» ղտույտի է դուրս եկել հեռավոր ու Հայաստանի դիվանագիտական ամաչնահերթությունների ցուցակում ոչ բարձր տեղեր գրավող երկրներ: <http://bit.ly/RRjgOA>

«Յայաստանի Յանրադետություն» օրաթերթը «Աշխարհը շարունակում է ընդվզել Յունգարիայի որոշման դեմ» վերնագրով նույնպես անդրադարձնում է Սաֆարովի արտահանման թեմային. «Ինչդեռ տեղեկացնում է ՅՅ սփյուռքի նախարարության Ամերիկայի հայ համայնքների վարչությունը, Յայաստանի ժամանակով երեկ գիշեր Նյու Յորքում Յունգարիայի հյուղատոսության դիմաց բողոքի ցույց է տեղի ունեցել, հայտնում են ՅՅ սփյուռքի նախարարության մամուլի և հասարակայնության հետ կադերի վարչությունից»: <http://bit.ly/11udx52>

Իսկ ահա «Ժողովուրդ» թերթը կարևոր է համարել այն լուրը, որ «Յայաստանի արտգործնախարարը կայցելի Կիդրոս». «Սեդտեմբերի 13-14-ը Կիդրոսի ԱԳ նախարար Էրատո Կոզակու-Մարկուլիսի հրավերով արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը դաշտոնական այցով կմեկնի Կիդրոս: ԱԳՆ մամուլի Ծառայությունից հայտնում են, որ այցելության ընթացքում նախարար Նալբանդյանը կհանդիպի Կիդրոսի բարձրաստիճան ղեկավարության հետ»: Նույն թերթի առաջին էջի ամենավերևում զետեղված է նյութ, որը դատում է, թե որտեղ է իր կոստյումները դատվիրում Սերժ Սարգսյանը՝ համանման տեղեկություն տալով նաև մի քանի այլ երկրի նախագահների մասին:

<http://bit.ly/100ubsT>

Սա ընտրված նյութերի համառոտ բովանդակությունն էր: Յիմա փորձենք հասկանալ, թե որն է դրանց դաթոսը կամ ուղերձը:

Ըստ «Առավոտի», Ֆրանսիայի վարչադետն էլ կարող է կաշառասուն լինել (նկարագրվածը լիովին կոռուպցիոն իրավիճակ է), ինչը «հասարակական լայն քննարկումների առարկա» չէր դառնա իր երկրում, բայց, ահա, որ հայ դատգամավորների նման շտես ուրիշ տեղ չկա, ամոթ է: Այս խմբագրականից դատելով՝ թերթը չափավոր դիրքորոշում ունի, այն քննադատում է իշխանությանը, բայց ըմբռնումով է վերաբերվում կաշառասունությանը. ամեն տեղ էլ կոդատահի, նույնիսկ՝ եվրոդայում:

«Յայկական ժամանակի» Էդիկը «տոմում է» վերնագրից արդեն հասկանալի է, որ թերթը ոչ միայն քննադատաբար է տրամադրված դեղի արտգործնախարարը, այլև որևէ հարգանք չի տածում նրա (իմա՝ կառավարության, իշխանության) հանդեղ: Սա արմատական ընդդիմադիր դիրքորոշում է:

Այն, որ «Յայաստանի Յանրադետությունը» նախարարություններից մեկի վարչության տեղեկությունը տեղադրում է առաջին էջում՝ առանց իր կողմից մեկնաբանություն ավելացնելու, ցույց է տալիս, որ թերթը սնվում է կառավարական աղբյուրներից և վստահում է դրանց:

Նույնը կարելի է ասել **«ժողովուրդ»** թերթի մասին, որը, ղեկավարված զե-րատեսչության հետ կապված «ժամիլսաֆարոլյան» սկանդալի ղա-հին, լուր է տալիս նրա ղեկավարի մի հերթական այցի մասին: Իսկ այն, որ թերթն առաջին էջին կոստյումի հարց է քննարկում, լինի դա թեկուզ երկրի ղեկավարինը, հավանական է դարձնում նրա ղատկանելություն-ը դեղին մամուլին:

Բովանդակությունից զատ, քննարկման առարկա է նաև ձևը: Կարևոր է ոչ միայն այն, թե ինչ է ասում լրատվամիջոցը, այլև՝ այն, թե ինչպես է ասում: Քանի որ դժվար է վստահել լրատվամիջոցի մեկնաբանությա-նը, եթե այն բավականաչափ արհեստավարժ չի շարադրված:

«Առավոտի» խմբագրականը շարադրված է լրագրողական սուր հեզ-նանքով: Այսուհանդերձ, Արամ Աբրահամյանի ղոնդումը, թե Ֆրան-սիայում առօրեական է վարչապետի կաշառակերությունը, հերքվում է նույն ֆրանսիական մեդիայի արձագանքներով, որ շատ բուռն են լինում:

«Հայկական ժամանակի» քննադատությունը սուր է, սակայն փաս-տարկվում է միանգամայն հավաստի տեղեկություններով՝ ըստ ամե-նայնի քաղված ԱԳԼ-ի կայքից:

Այն, որ **«Հայաստանի Հանրապետություն»** թերթի տղագրած տեղեկու-թյան մեջ հանդիպում ենք «Հայաստանի ժամանակով երեկ գիշեր» անհեթեթ արտահայտությանը, խոսում է ոչ միայն Սփյուռքի նախարա-րության տվյալ վարչության, այլև խմբագրության անվտանգության մասին:

Թերթի մի համարի միայն առաջին էջի մեկ նյութի վերլուծությունը բա-վական չէ լուրջ եզրակացությունների հանգելու համար: Արամ Աբրա-համյանի ուրիշ խմբագրականներում, հազիվ թե հանդիպես այնպիսի ոչ հիմնավոր ղոնդումների, ինչպիսին կար քննարկված օրինակում: Նույնը կարող է վերաբերել **«Հայաստանի Հանրապետություն»** օրաթեր-թի լեզվական վրիդմանը և այլն: Չի բացառվում, որ **«Հայկական ժա-մանակի»** այլ հրատարակումներում քննադատությունը նույնքան հիմնավոր չլինի... Բայց արդեն մեկ շաբաթվա նյութերով կարող ենք որոշել ոչ միայն լրատվամիջոցի առանձին ուղերձները, այլև նրա քա-ղաքական կողմնորոշումը, արհեստավարժության աստիճանը, նույ-նիսկ՝ այն, թե ֆինանսավորման ինչ աղբյուրներ ունի: Կանադացի հետազոտող Մարշալ Մաքլյոնեի ձևակերպմամբ «մեդիան ինքը ուղերձ է»⁸: Ուրեմն, լրատվամիջոցի, տվյալ դեղքում ղարբերականի ուղերձը ղարգելուց հետո մենք կարող ենք այլևս էներգիա չծախսել նրա բոլոր նյութերը քննադատորեն գնահատելու ուղղությամբ, այլ կամ համարել այն վստահելի աղբյուր ու բաժանորդագրվել, կամ հրաժարվել կարղա-լուց, կամ կարղալ միայն այն խորագրերը (հեղինակներին), որոնց տե-

8 McLuhan, Marshall, Understanding Media: The Extensions of Man (1964), Cambridge: The MIT Press, 1994

ղեկավարությունը համարում ենք հավաստի ու արհեստավարժ: Ընդ որում, մեզ համար ընդունելի կամ մերժելի լրատվամիջոցների ընտրությունը չի նշանակում, թե քննադատական մտածողությունը ղեկավար է արձակուրդ ուղարկենք: Այդ լրատվամիջոցները կարող են ժամանակի ընթացքում փոխել իրենց կողմնորոշումը, դավաճանել անաչառության սկզբունքներին, կորցնել արհեստավարժությունը:

Ըստ այդմ էլ, քննադատական մտածողության երկու թշնամիներն են դյուրահավատությունն ու ժխտողականությունը: Ամեն ինչին հավատալու և ոչ մի բանի չհավատալու սկզբունքներն արժեքակրում են ճանաչողության գործընթացը: Խորհրդային տարիներին ասում էին՝ «տելեվիզորով ասեցին», որոշ սուրբ ճշմարտություն, սակավաթիվ այլախոհներն էլ նույն հեռուստատեսության ոչ մի խոսքին չէին հավատում: Երկու դեղքում էլ մենք գործ չունենք հեռուստաԴԻՏՈՂՆերի հետ, այլ մի երևույթի, որը մենք բոլորս խոսակցական լեզվում կոչում ենք «հեռուստացույց նայել»: Ահնշդեռ գրական լեզվով կասեինք՝ հեռուստացույց դիտել: Քննադատական մտածողությունը հենց դիտելն է և ոչ թե նայելը: Նայելիս մենք ամանց վերադասարանության ընդունում ենք այն, ինչ մեզ մատուցում են, դիտելիս՝ սկսում ենք վերլուծել, համադրել մեր ունեցած տեղեկությունների հետ, հակադրել դրանց, ուշադրություն դարձնել դատճարման հետևանքային կադերին և այլն: Ամերիկյան մասնագիտական գրականության մեջ այս իմաստով «դիտելը» կոչում են «երկրորդ հայացք գցել»: «Երկրորդ հայացք գցել» նշանակում է ավելի խորը թափանցել տեքստի մեջ՝ որոնելով նոր իմաստներ կամ մեկնաբանություններ... Ակադեմիական առումով՝ դա նշանակում է ենթատեքստեր գտնել⁹:

9 <http://bit.ly/18Zw6BZ>

Media Literacy Through Critical Thinking. Teacher Materials. By Chris M. Worsnop, 24.

Հիմա անցնենք հեռուստատեսությանը և փորձենք «ենթատեքստ» գտնել ամենամանր մի տեքստում՝ «Բարի լուր», որն ամեն օր հեռարձակվում է «Արմնյուզ» հեռուստաալիքով: Բովանդակությունն ընդամենը մեկ նախադասություն է. այսօր Երևանի Ծննդատներում Ծնվել է (դիցուք) 45 երեխա. 22 աղջիկ, 23 տղա: Լուրը, որն ուղեկցվում է նորածիններ դատկերող տեսանյութով ու դեղատնային ցանցի գովազդով, իմ անձնական դիտարկումներով՝ խանդաղատանք է առաջացնում հատկապես կանանց շրջանում: Փորձենք «տանը նստած» դարձել, թե այս լուրն ինչքանով է բարի: Այն կարող է լինել ինչպես բարի, այնպես էլ՝ «չար»: Անձ համար լուրը բարի է, եթե վկայում է, որ երկրի ժողովրդագրական վիճակը բարելավվում է: Այդտեղ մեզ կարող են ուղղորդել միայն վիճակագրական տվյալները: Եթե նախորդ տարի նույն ժամանակ Երևանում Ծնվել է 35 երեխա, ադա ղեկավար է ժողովանք և ուրախանանք, եթե 55, ուրեմն Ծնունդները կրճատվել են, և մեր տրամադրությունն էլ ղեկավար է լինի համադատասխան՝ տխուր: Այսինքն, լրա-

տվածիչը մեզ բավարար չի իրագեկում, որդեսգի հավատանք, որ իր հաղորդած տեղեկությունը բարի է:

Համացանցում նույն թեմայով այլ լուրերի մեջ կար նաև «**eMedia.am**»-ի տարբերակը. «**05.03.2012** | Արհամարիելով Հայաստանի սոցիալական վատ թայմաներն ու դեռևս շարունակվող ցուրտն՝ այսօր Երևանում լույս աշխարհ է եկել 32 երեխա: Սակայն կա մեկ յուրահատկություն՝ այսօր Երևանի Ծննդատներում դահողանվել է սեռային հավասարությունը՝ Ծնվել են 16 տղա և 16 աղջիկ»¹⁰: Այստեղ էլ փաստը հումորով են մեկնաբանել: Միակ ուղերձը, որ կարելի է մեկնաբանության մեջ գտնել, սեռային հավասարության հանդեպ դրական վերաբերմունքն է: «Բարի լուրի» գաղափարախոսությունն է, ուրեմն, դրական տրամադրություններ հարուցել՝ անկախ այն բանից, թե ինչ հիմքեր կան դրա համար: Այսօրի դիրքորոշումը ընդհանրապես հատուկ է իշխանամետ լրատվամիջոցներին, որոնք ցանկանում են իրականությունն ավելի լավ գույներով ներկայացնել, քան այն կա:

10 <http://bit.ly/RRjRPU>

Մյուս կողմից, մեր (նաև՝ ռուսական) հեռուստատեսությունների լրահոսի մեջ արդեն առաջին հորիզոնականում են հաստատվում ավտոլթարները: Գիտնականները դարձել են, որ վատ լուրերն ավելի մեծ հետաքրքրություն են առաջացնում: Բայց այստեղ էլ կարևոր է ճշտել, թե ինչին է վերաբերում լուրը. խոսքը **դատահարի**¹¹, թե՞ **իրադարձության** մասին է: Վթարներն էլ կարող են իրադարձության վերածվել, եթե առանձնահատուկ են գոհերի քանակով, դատաճառած ավերածությունների շափով և այլն: Իսկ երբ ամենօրյա, թեկուզև շատ ցավալի՝ մահվան ելքով ավտոլթարն է հայտնվում լուրերի առաջին եռյակում, մշանակում է՝ այն զբաղեցնում է որևէ **իրադարձության** տեղը: Այսինքն, տվյալ լրատվամիջոցի զլխավոր մոտատակն իրականության արտացոլումը չէ, այլ իր դիտելիությունն ավելացնելը, ինչը հատուկ է «դեղին» մեդիային:

Նույնը վերաբերում է հետաքրքրական լուրերին: Դրանք ղետք է լինեն հավաստի և կրեն ուղերձներ: Մինչդեռ մեր մեդիան վերջին 1-2 տարին հեղեղված է «բրիտանացի գիտնականների» «ցնցող» հայտնագործություններով: «Բրիտանացի գիտնականները դարձել են, որ սեռական հարաբերության համար լավագույն ժամանակը հինգշաբթի առավոտյան է: Հենց շաբաթվա այդ օրը կորտիզոլի բնական մակարդակը, որը կարգավորում է սեռական հորմոնները, հասնում է իր գագաթնակետին»¹¹...

11 Ինչդեռ լավացնել սեռական կյանքը

http://www.1in.am/arm/more_entertainment_114025.html

«Մեծ Բրիտանիայի Սաութհեմփթոնի համալսարանի գիտնականները շարունակում են աշխարհին ուրախացնել հետաքրքիր և օգտակար բացահայտումներով... երբ սառած «հիմ» մագման խառնվում է «երիտասարդ» ու տաք մագմայի հետ, ժայթքումը շատ բուռն է լինում»¹²:

12 http://www.1in.am/arm/more_entertainment_121972.html

13 Բրիտանացի գիտնականներն ու անտաղանդ լրատվականները ..

Անհեթեթ կամ կասկածելի հավաստիության հայտնագործություններին ուշադրություն է դարձրել, օրինակ, «Ձայնալար» կեղծանունով բլոգերը, որն այդպիսի լուրերի մի ամբողջ հավաքածու է ներկայացրել «Բրիտանացի գիտնականներն ու անտաղանդ լրատվականները»¹³ վերնագրով, այդպիսով դրսևորելով իրեն որդեգրած մեդիայի որակյալ սղառող:

Այստեղ տեղին է հիշել, որ Հնդկաստանի կառավարությունն ազգային լրատվամիջոցներին արգելել է ուղղակիորեն օգտվել արտասահմանյան լրատվական գործակալությունների հաղորդագրություններից: Դա, իհարկե, օտար ազդեցությունները զտելու մի օղակ ունենալու նդատակ է հետադդդում, բայց և զուգահեռաբար օժանդակում է, որ ամեն տեսակի բարբաջանք ազատորեն շտարածվի իր երկրի քաղաքացիների շրջանում:

Աիայն թե գիտենք, որ արգելքները խնդիր չեն լուծում: Աեր քննարկած օրինակներում մանիդուլյացիայի միայն 2-3 հնարք կար, բարեխիղճ ու որակյալ դրսևորումներ՝ նույնքան: Լրագրության հանրահայտ սկզբունքներից է, որ ազատությունը ենթադրում է դատասխանատու ազնվություն: Աեր մեդիագրագիտությունը և զարգացած քննադատական մտածողությունն ազատ և դատասխանատու մեդիա ունենալու լրջագույն երաշխիքներից են:

ԻՆՉՊԵՍ Է ԱՇԽԱՏՈՒՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԸ

Անդրադասարան սոցիալական միջավայրի ճակատագրի հզորագույն գործիք է: Անդրադասարանը, թե՛ տանը, թե՛ աշխատավայրում, թե՛ մեքենայի մեջ առնչվում են լրատվության հետ. միացնում են ռադիոն կամ հեռուստացույցը, տեղեկություններ են փնտրում կամ տարածում ինտերնետում, թերթում են տղազիր լրագրերը: Տեղեկատվության և հաղորդակցության բազմաթիվ միջոցներն այսօր կազմում են միասնական մեդիա համակարգ, որի տարբեր բաղադրիչները ենթարկվում են նույն օրինաչափություններին և գործում են նմանատիպ կանոններով՝ տնտեսական, իրավական, մասնագիտական:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԸ ՈՐՊԵՍ ՋԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Եկեք դատկերացնենք մեդիայի ամբողջությունը՝ որպես աղբյուրների և ծառայությունների շուկա: Չէ՞ որ լրատվամիջոցը տեղեկատվություն է վաճառում լսարանին, և ուրեմն այդ տեղեկատվությունը դառնում է սղառողի համար արտադրված աղբյուր: Որակյալ աղբյուրը արտադրելու և սղառելու համար ձեռնարկությունը (այս դարազայում՝ լրատվամիջոցը) ղեկավար է ունենա համադասարանային նյութատեխնիկական բազա, ֆինանսական ռեսուրսներ, ստեղծագործական և տեխնիկական անձնակազմ: Լրատվամիջոցի, ինչպես ցանկացած ձեռնարկության գործունեությունը ղեկավար է միտված լինի շահույթ ստանալուն: Իսկ շահույթ այն կարող է ստանալ միայն աղախովելով տեղեկատվական ծառայությունների բարձր որակ: Անշուշտ, այսօր Հայաստանում գործող ՀԱՄ-ներից շատերի նպատակը ոչ թե շահույթ ստանալն է, այլ գլխավորապես քաղաքական ուժերի կամ ֆինանսատնտեսական խմբավորումների և անձերի շահերը սղառարկելն է: Այնուամենայնիվ, մեզ մոտ քայլ առ քայլ կայանում է ՀԱՄ-ների մրցակցային շուկան, շարունակվում է մեդիայի առևտրայնացման գործընթացը: Եվ այդ գործընթացում առանց տնտեսական գործիքների կիրառման հնարավոր չէ աղախովել լրատվամիջոցի գոյությունը:

Եթե դուք ցանկանում եք լրատվամիջոց հիմնել, առաջին հերթին ղեկավար է ընտրեք գործունեության իրավակազմակերպական ձևերից մեկը. դա անհրաժեշտ է սեփականության իրավունքը, եկամուտները, ինքնուրույն հաշվեկշիռը, բանկային հաշիվները, աղբյուրանշանը և այլ հարցեր կարգավորելու համար: Բացի այդ, հաշիվ առնելով շուկայի և մեդիա մեքենայի մասին ղեկավարումը, ղեկավարել խմբագրության ղեկավարման ձևերն ու մեթոդները, աղա ձևավորել ղեկավարող թիմ:

Ներկայացնենք լրատվամիջոցի ղեկավարման արդյունավետ մոդելներ:

ՏԻՓՐԱՆ ՀԱՎՈՐԵՅԱԿ

Անդրադասարան, վերլուծաբան

րից մեկը: Աեղիան, ինչդեռ ցանկացած ձեռնարկություն, ղետք է ունենա ղեկավար: Անկախ նրանից, թե ինչ կանվանեն ղեկավարի ղաշտոնը՝ հրատարակիչ, նախագահ, գլխավոր խմբագիր թե գործադիր տնօրեն, նա կատարում է լրատվամիջոցի կառավարչի գործառնայթենը: Կառավարիչը կարող է լինել տվյալ մեղիայի բաժնետերը կամ սեփականատերը: Սակայն հիմնականում, հատկաղես եթե մեղիան խոշոր կորողորացիայի սեփականություն է, կառավարիչ է նշանակվում տվյալ բնագավառի հմուտ մեներչեր: Այդ կառավարիչը համակարգում է լրատվամիջոցի գործունեության երեք հիմնական ուղղությունները՝ խմբագրական, տեխնիկական, առևտրային:

Խմբագրությունը լրատվամիջոցի բովանդակային մասի (նորություններ, հողվածներ, տեսա և ձայնային նյութեր, լուսանկարներ) ղատասխանատուն է: Այն ղեկավարում է գլխավոր խմբագիրը: Նա ձևավորում է ստեղծագործական թիմը, որոշում է լրատվամիջոցի բովանդակային ռազմավարությունը, ծրագրերի ուղղվածությունն ու բնույթը, վերահսկում է ծրագրերի և նյութերի որակը:

Տեխնիկական ստորաբաժանումը լուծում է լրատվամիջոցի արտաղրական խնդիրները՝ թերթի թողարկում, հաղորդումների ղատրաստման և հեռարձակման տեխնիկական բազայի սղասարկում և նորոգում: Բաժինը ղեկավարում է տեխնիկական տնօրենը, ով ղատասխանատու է տեխնիկական անձնակազմի աշխատանքի ու լրատվամիջոցի տեխնիկական վիճակի համար, աղահողվում է եթերի կամ հրատարակության տեխնիկական որակը: Այստեղ նշենք, որ նոր տեխնոլոգիաների շնորհիվ մի շարք գործառնայթեն տեխնիկական բաժիններից տեղավողվում են խմբագրություններ (օրինակ՝ թերթի էջի շարվածքը կամ որոշ համակարգային գործողությունները, մոնտաժը, ձևավորումը ռաղիո և հեռուստաընկերություններում), ինչը գումարներ է տնտեսում:

Կոմերցիոն ստորաբաժանումը, առաջին հերթին, լուծում է գովաղատումներ փնտրելու կարևորագույն խնդիրը, քանի որ, ևս մեկ անգամ կրկնենք, մեղիան որղես անկախ միավոր՝ կարող է գոյատեղ միայն գովաղղի շնորհիվ: Կոմերցիոն ստորաբաժանումը նաև վարում է հաշվաղահողությունը, զբաղվում է մեղիա մարկետինգով (շուկայագիտողյամբ), իրականացնում է բաժանորղագրությունը, իսկ խոշոր լրատվամիջոցներում՝ նաև ռազմավարական ղլանավորումը: Ստորաբաժանումը ղեկավարում է ֆինանսական կամ կոմերցիոն տնօրենը: Կայուն եկամուտներ ստանալու համար շատ կարևոր է ղահղանել գովաղղային քաղաքականողյամ նորմերը (գովաղղի աղբյուրների սահմանումը /որոշումը/, օղտիմալ, մրցակցային գնի կարգը, եկամուտների ղլանավորումը): Գովաղղի ղատասխանատուն ղետք է քաշ ծանղթ

լինի Հայաստանի գովազդային շուկայում տիրող իրավիճակին, գովազդի առաջարկի և լուսանկարի հարաբերակցությանը: Փոքր ՉԼՄ-ների համար կարևոր նշանակություն ունի գովազդի մասնավոր լուսավորումների ներգրավումը: Խոշոր ՉԼՄ-ների համար առաջին լույսն են դուրս գալիս գովազդային գործակալությունները, որոնց հետ լրատվամիջոցը դաշնամագիլ է կնքում՝ տրամադրելով հատուկ զեղչային սակագներ գովազդի ամխափան մատակարարման համար:

Բացի գովազդից, լրատվամիջոցը դեռ է ունակ լինի եկամուտներ ստանալ նաև այլ աղբյուրներից: Իսկ այդ աղբյուրները բազմաթիվ են՝ հաղորդումների, տեսա և ձայնասկավառակների լուստրաստում և վաճառք, համերգների կազմակերպում, գրքերի վաճառք, հանրային կադերի՝ PR ծառայություններ, տեխնիկական միջոցների վարձակալություն և այլն: Սակայն մեծ եկամուտներ առաջիկային և այլ կոմերցիոն գործունեությունը չդեռ է դառնա լրատվամիջոցի համար զլխավոր նույնտակ՝ երկրորդ լույսն մղելով մեդիայի կարևորագույն առաքելությունը՝ բազմազան և որակյալ տեղեկատվությամբ բավարարել հասարակության լուսանկարը: Ինչո՞ւ: Որովհետև որակյալ մեդիան ոչ միայն տեղեկատվական աղբյուրի վաճառող է, այլ նաև հանրային կարծիք ձևավորող, այն ներառում է տարբեր ոլորտներում որոշումներ կայացնող համակարգերի վրա և ուրեմն դառնում է հանրային ազդեցության գործիք: Տնտեսաբան ավելի շահավետ է աշխատել այնպես, որ սղառողն իր տեղեկատվություն ստանալու լուսանկարները բավարարելու համար ընտրի հենց թո լրատվամիջոցը: Ամբողջ մեդիա բիզնեսը հիմնված է մի շատ կարևոր հանգամանքի՝ ընթերցողի կամ ունկնդրի՝ տեղեկատվության աղբյուրի հանդեպ վստահության վրա: Եթե առկա է այդ վստահությունը, ուրեմն հնարավոր է աղախովել համալուստասխան եկամուտները, եթե ոչ՝ տվյալ մեդիա բիզնեսի արդյունավետությունը երկար չի տևի:

Տնտեսական գործոնը շատ մեծ ազդեցություն ունի խմբագրական մեքնեքնների ամբողջ գործընթացի վրա: Արդիա մեքնեքնների կարևորագույն նույնտակներից է տվյալ մեդիայի աշխատակիցների մեք տնտեսական մտածելակերպի դաստիարակումը: Այն հիմնված է տնտեսական երեք սկզբունքների վրա: Առաջինը՝ մեդիայի շահութաբերության սկզբունքն է: Երկրորդը՝ մեդիայի մրցունակության աղախովումը տվյալ լրատվական շուկայում: Երրորդ սկզբունքը՝ տնտեսական խնայողությունն է, ինչը եքնադրում է ե՛ւ դեկավարների, ե՛ւ յուրաքանչյուր աշխատակցի ձգտումը՝ հասնել նույնտակին՝ օգտագործելով ռեսուրսների, միջոցների, ուժերի նվազագույնը, և կարն ժամանակահատվածում հասնել օղտիմալ արդյունքների:

Խմբագրության բաժանումը երկու մասի՝ ստեղծագործական և տնտեսական, հայաստանում արդեն տարածում է գտնում, ինչը վկայում է մեզ մոտ արդյունավետ մեդիա մենեջմենթի արմատավորման մասին: Այլ շարք լրատվամիջոցներում՝ հատկապես խոշոր հեռուստաընկերություններում, երկու մասն էլ իրենց խնդիրները լուծում են բավական ազատ և անկախ՝ միևնույն ժամանակ փոխգործակցելով և ներազդելով միմյանց վրա: Իսկ համեստ ռեսուրսներով լրատվամիջոցներում (սա ավելի շատ վերաբերում է տղազիր մամուլին կամ լրատվական ինտերնետ կայքերին) ֆինանսական մենեջմենթով հանախ զբաղվում է գլխավոր խմբագիրը, տվյալ լրատվամիջոցի սեփականատերը կամ տնօրենը: Դա թույլ է տալիս խնայել ֆինանսական սուղ միջոցները:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ժողովրդավարական, իրավական ղեկավարության կայացման և բնականոն զարգացման ղարտաղիքի ղայման է իրավունքի գերակայությունը և իրավունքի նորմերի ղահողանումը սոցիալական փոխգործակցության բոլոր սուբյեկտների կողմից՝ ղետական հաստատությունների, ղաշտոնատար անձանց, քաղաքացիների, զանգվածային լրատվամիջոցների, լրագրողների: Հետևաբար, լրատվամիջոցի խմբագրությունը, որդես սոցիալական ինստիտուտներից մեկը, և խմբագրության կողմից արտադրված աղբյուրը (թերթը, տեսա և ձայնային նյութը, լուսանկարը և այլն) հանդիսանում են իրավական կարգավորման օբյեկտներ:

Այստեղ տեղին է իմանալ, որ ցանկացած ղեկավարություն միշտ օգտագործել և օգտագործում է իրավական լծակներ՝ տեղեկատվական հոսքերն ու մեդիաները վերահսկելու, տեղեկատվական դաշտն ուղղորդելու համար: Ամշուշտ, իրավական ազդեցության ուժն ու մեթոդները կախված են ղետական համակարգի ձևից և քաղաքացիական հասարակության հասունության մակարդակից: Տոտալիտար ղեկավարություններում լրատվամիջոցների գործունեության կարգավորումը կատարվում է կոշտ քաղաքական և գաղափարախոսական գրաքննությամբ, իսկ ժողովրդավարական, ազատական երկրներում այն կարգավորվում է շատ նուրբ, քողարկված և միջնորդված ֆինանսական և իրավական մեխանիզմների օգտագործմամբ: ղեկավարությունը ստեղծում է մեդիան համակարգող իրավական դաշտ, որը բաղկացած է օրենքներից, կարգադրություններից, վերահսկող մարմիններից, նորմատիվ ակտերից և այլ իրավական գործիքներից: Այդ համակարգն ընդգրկում է մեդիայի աշխատանքների բոլոր ոլորտները՝ նյութերի ղատրաստման և թողարկման գործընթացը, խմբագրության և տեղեկատվություն սղառողի փոխհարաբերությունները:

Ներկայումս Հայաստանում կարելի է ձևավորված համարել մեդիային վերաբերող իրավական փաստաթղթերի համակարգը, որը բաղկացած է առաջին հերթին հետևալ օրենքներից՝ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, «Գովազդի մասին» ՀՀ օրենքը, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը: Չանգվածային լրատվամիջոցների գործունեության կարգավորման անմիջականորեն առնչվում են նաև ՀՀ Քաղաքացիական, Աշխատանքային, Քրեական օրենսգրքերը և այլ իրավական ակտեր:

Այդ բոլոր օրենքները կարգավորում են տարբեր սուբյեկտների իրավական հարաբերությունները, որոնց մի մասը կրում են ներքին բնույթ և վերաբերում են լրատվամիջոցի ներքին գործունեությունը՝ լրատվական նյութեր ղատրաստելուն և թողարկելուն: Իսկ մյուս մասը կարգավորում է մեդիայի և լրագրողի արտաքին շփումները՝ ղետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, դատական ատյանների, ոչ ղետական հաստատությունների և տեղեկատվությունը սղառող քաղաքացիների հետ:

Իրավական հարաբերություններում գլխավոր դերը տրված է գլխավոր խմբագրին կամ գործադիր տնօրենին: Նրանք են լրատվամիջոցը ներկայացնում ղետական հաստատությունների, ձեռնարկությունների, քաղաքացիների հետ հարաբերություններում, դատական ատյաններում: Լրատվամիջոցի տարբեր կողմերի՝ հիմնադիր, հրատարակիչ, գործադիր տնօրեն, հեռարձակող, խմբագրություն, լրագրող և այլն, իրավական փոխհարաբերությունները սահմանվում են ոչ միայն օրենսդրությամբ, այլ նաև տվյալ լրատվամիջոցի կանոնադրությամբ: Այն հստակեցնում է խմբագրության իրավական հարաբերությունները հիմնադրի, հրատարակչի հետ, գլխավոր խմբագրի կամ տնօրենի նշանակման/ընտրության կարգը, լրագրողների լիազորությունները, իրավունքներն ու ղարտականությունները:

Բազմաբնույթ են լրատվամիջոցի և լրագրողի արտաքին իրավական հարաբերությունները, որոնց կարևորագույն բաղադրիչն է՝ տեղեկատվություն փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը: Օրենսդրությամբ լրագրողին իրավունք է տրված այցելել ղետական հաստատություններ, կազմակերղություններ, ձեռնարկություններ, հանրային միավորումներ, ծանղթանալ տարբեր տեսակի նյութերին և փաստաթղթերին, որոնք չեն ղարունակում ղետական, կոմերցիոն

կամ օրենքով ամրագրված այլ գաղտնի տեղեկություններ: Լրագրողն իրավունք ունի կատարել ճայնա և տեսագրություններ՝ բացառությամբ օրենքով ամրագրված դեղքերի: Այստեղ նշենք, որ ե՛ւ խմբագրությունը, ե՛ւ լրագրողը Պարտավոր են պահպանել հեղինակի և հրատարակչի հեղինակային իրավունքները: Հատուկ շեշտենք, որ լրագրողը Պարտավոր է ստուգել ստացված տեղեկատվության արժանահավատությունը: Նա իրավունք չունի աղավաղված փաստերով աղակողմնորոշել տեղեկատվությունը սղառող քաղաքացուն:

Իհարկե, ՉԼԱ-ների իրավական դաշտը Հայաստանում դեռ անկատար է: Գործող օրենսդրությունը չի երաշխավորում խոսքի լիակատար ազատությունը, որոշ լրատվամիջոցների հանդեպ գրաքննությունը հաճախ իրականացվում է բացահայտ, հաճախ են մամուլի ներկայացուցիչների հանդեպ բռնության դեղքերը: Ուրեմն ե՛ւ խմբագրությունը, ե՛ւ լրագրողը Պետք է շատ լավ իմանան օրենքով իրենց ամրագրված իրավունքները, որոշեցի կարողանան լիարժեք կատարել իրենց Պարտականությունները: Լրագրողի ամենահզոր լծակն իր իրավունքների իմացությունն է:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼՐԱԳՐՈՂ

*Պայծառ սողազայի համար հոգ են սսևում քաղաքական գործիչները,
Պայծառ սևգայի համար՝ Պատմաբանները,
Պայծառ ներկայի համար՝ լրագրողները:*

Ժարկր Պետան, սլովեն գրող

Նույնիսկ ամենաժողովրդական երկրներում կառավարությունը, բիզնես շրջանակները, քաղաքական ուժերը սովորաբար չեն կարողանում կամ չեն ցանկանում ինքնուրույն և ճշմարիտ կերպով շփվել քաղաքացիների հետ՝ վերջիններիս համար հասկանալի և համոզիչ լեզվով, իսկ հաճախ, սեփական շահերից ելնելով, նաև թաքցնում են ճշմարտությունը: Այուս կողմից, քաղաքացիները, որոշես տեղեկատվության սղառողներ, մեծամասամբ չունեն այն անհրաժեշտ խորը գիտելիքները, որոնք թույլ կտային ինքնուրույն վերլուծել տեղեկատվությունը և տարբերել ճշմարտությունն աղատեղեկատվությունից:

Այստեղից է գալիս լրագրողի կարևորագույն առաքելությունը՝ իրականացնելով իշխանության գործունեության հանրային վերահսկողությունը, օբյեկտիվ և բազմակողմանի լուսաբանել հանրային նշանակություն ունեցող իրադարձությունները: Սակայն լուսաբանումը չի նշանակում

միայն չոր փաստերի ներկայացում. լրագրողը ղեկն է կարողանա բացատրել և վերլուծել այդ փաստը: Նշենք նաև լրագրողի առաքելության այլ բաղադրիչները՝ կրթական և վերլուծական գործառնությունները: Այլ խնդիր է, որ փաստը մշտադեպ անհրաժեշտ է տարանջատել մեկնաբանությունից: Լրագրողի և լսարանի կադմ իրականացվում է լրատվության միջոցներով, որոնք են տղազիր ղարբերականները, հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետը:

Եվ ղեկն է հասկանալ, որ լրագրողն իր առաքելությունը չի կարող կատարել առանց տնտեսության, հասարակական-քաղաքական կյանքի, դրանց օրինաչափությունների, գործիքների մասին համադատասխան գիտելիքի: Ահայն իր դերն ու նշանակությունը գիտակցող, կիրթ, ունակ անձը կարող է հետևել տարբեր ոլորտներում ընթացող զարգացումներին, և այն ժամանակ, երբ այդ զարգացումները սկսեն բացասական բնույթ կրել, ազդակներ ուղարկել հասարակությանը, բիզնես կառույցներին, իշխանություններին: Անձնական խիզախությունը, ազնվությունը, դատասխանատվությունը՝ դրոֆեսիոնալ լրագրողի անհրաժեշտ որակներն են: Եվ հենց այս մասնագիտության հասարակական նշանակության գիտակցությունն է, որ լրագրողին դարձնում է ազատ, համարձակ և դատասխանատու:

Այստեղ հարկ է նշել, որ լրագրողը դատասխանատու է ոչ միայն հասարակության առջև, այլ նաև այն լրատվամիջոցի, որտեղ կամ որի համար նա աշխատում է: Յուրաքանչյուր լրատվամիջոց ինքն է սահմանում լրագրողի ֆունկցիոնալ դարտականությունները: Նշենք մի քանիսը.

- լրատվամիջոցի համար դատրաստել տեղեկատվական նյութեր՝ նախօրոք համաձայնեցված թեմաներով, խմբագրության դահանջներին համադատասխան,
- դատրաստել հարցեր հարցազրույցի համար, նշանակել հանդիդումներ, այցելել մամուլի ասուլիսների, ժողովների, արտակարգ դատահարների վայրեր,
- մշակել ստացված տեղեկատվությունը, ներկայացել այն տեղեկատվական նյութերի տեսքով (ռեդորտաժ, հարցազրույց, մեկնաբանություն, ֆելյետոն, լրագրողական հետաքննություն, նորություն, այլ)
- կատարել տեղեկատվության փաստերի վերստուգում, խմբագրել նյութերը:

Ուրեմն լրագրողը ղեկն է ունակ լինի արագ հավաքել, վերլուծել, մշակել, գրագետ և մատչելի շարադրել հանրային կարևորություն ունեցող տեղեկատվությունը՝ հաշվի առնելով լրատվամիջոցի տեսակի, ժանրի, ռնի դահանջները: Տեղեկատվական նյութի վերջնական տարբերակը,

խմբագրի հավանությանն արժանանալու դեղքում, լույս է տեսնում հողվածի, հեռուստա կամ ռադիո հաղորդման, ռեդիոտաժի տեսքով:

Երբեմն լրագրողի տարտականությունների մեջ է մտնում հողվածին համադատասխան լուսանկարի, գրաֆիկայի կամ ձևավորման այլ եղանակի ընտրությունը: Այդպիսի տարտական ընդունված է փոքր խմբագրություններում, որտեղ բիլդ խմբագրի (գեղարվեստական ղեկավար, հատուկ էջադրող) հաստիք նախատեսված չէ:

Խմբագրության աշխատակիցը նաև տարտավոր է իմանալ.

- ՉԼԱ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը,
- խմբագրական աշխատանքի հիմունքները,
- աշխատանքային լեզվի՝ տվյալ դեղքում հայերենի ուղղագրությունն ու ոճային առանձնահատկությունները,
- լրագրողական էթիկայի կանոնները,
- համակարգչային և հեռահաղորդակցման տեխնիկայի միջոցները:

Աեդիա շուկային համադատասխանելու համար լրագրողին անհրաժեշտ են նաև այլ մասնագիտական որակներ: Առանց ստեղծագործական և հաղորդակցական ունակությունների, թիմում աշխատելու կարողության, կյանքի փորձի, ինտոիցիայի, իրավական գիտելիքների՝ արհեստավարժ լրագրողը չի կարող կայանալ: Տվյալ լրատվամիջոցի առանձնահատկությունը ևս իր լուսատուներին է ներկայացնում լրագրողին: Այսպես, հեռուստա և ռադիոլրագրողը լուսատու է ունենա հստակ առաջանություն, ուղիղ եթերում աշխատելու ունակություն: Հարցազրույց վարելիս նա լուսատու է կարողանա հետաքրքիր հարցեր ձևակերտել, լսել և հասկանալ զրուցակցին, անհրաժեշտության դեղքում փոխել զրույցի ընթացքը:

Լրագրողի համար շատ կարևոր է մշտական հետադարձ կադ լուսատուները լսարանի հետ: Հրատարակված հողվածը կամ եթեր հեռարձակված ռեդիոտաժը հաճախ է արձագանք գտնում քաղաքացիների շրջանում: Ընթերցողները, ռադիո և հեռուստադիտողները զանգահարում են խմբագրություններ, նամակներ են գրում, օնլայն լրատվամիջոցների ֆորումներում մեկնաբանություններ թողնում: Լրագրողը լուսատու է հետևի լսարանի կարծիքին, իսկ իրավական վեճերի առաջացման դեղքում՝ լուսատուներին լինի սեփական տեսակետը լուսատուներին դատական ատյաններում:

Մասնագիտական հաջողությունների հասնելու համար, բացի վերը նշված հատկություններից, որակներից, ունակություններից, լրագրողը

դետք է առաջնորդվի նաև մի շարք կանոններով: Փորձենք հակիրճ ձևակերպել մի քանիսը:

- Վնհրաժեշտ է խուսափել քաղաքական ուժերի կամ ֆինանսատնտեսական խմբերի հետ սերտ կապեր ունենալուց. դա կարող է միայն խոչընդոտել մասնագիտական գործունեությունը:
- «Լրագրությունը սկսվում է այնտեղ, որտեղ ինչ-որ մեկը փորձում է ինչ-որ բան թաքցնել», - ասում է հայտնի ասացվածքը: Կասկածանքի ենթարկեք և ստուգեք ձեզ փոխանցված նույնիսկ անհերքելի թվանցող փաստերը:
- Սեփական դիրքորոշում ունեցեք յուրաքանչյուր իրադարձության մասին, որը ցանկանում էք հասարակական քննարկման թեմա դարձնել, նույնիսկ եթե այդ դիրքորոշումը տարտադրված չէք արտահայտել:
- Աի՛ խուսափեք դարձ մարդկային շփումներից: Ցուցաբերեք անկեղծ հետաքրքրություն մարդկանց և իրենց դատմածի հանդեպ, և դուք կունենաք տեղեկատվության հավելյալ աղբյուրներ:
- Օբյեկտիվությունը լրագրողի գործունեության կարևոր չափորոշիչներից է: Աիշտ չէ, որ հնարավոր է հասնել բացարձակ օբյեկտիվության, սակայն դետք է ձգտել դրան:
- Խուսափեք մասնագիտական մեծամտությունից: Չիշեք, որ դուք աշխատում եք առաջին հերթին հանրության համար:

ՅԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յեռուստատեսությունը միշտ ցուցադրում է իրականության մի մասը և իրականությունն ըստ տեսախցիկի և հեղինակի... Վնգամ ամենամեծ ցանկության դեղքում՝ հեղինակը չի կարող ցույց տալ ամբողջ իրականությունը և լինել հարյուր տոկոսով օբյեկտիվ: Այդուհանդերձ, հեռուստալրագրողի տարտականությունն է հնարավորինս անկողմնակալ լինել, տեսանյութում լինել չեզոք և թույլ տալ, որ դիտողն ինքը ենթադրություններ անի:

Քիչ չեն սակայն դեղքերը, երբ տեսանյութի հեղինակները դիտավորյալ փոխում են իրականությունը և որոշակի տեսակ, դիրքորոշում ու վերաբերմունք են մատուցում հեռուստադիտողին: Խոսքն այս դեղքում տեխնիկական հնարքների մասին է: Դիտարկենք նկարահանման և մոնտաժի հնարքներ, որոնք դեն են հեռուստատեսային կանոններին և համարվում են մանիպուլյացիոն հնարքներ:

Նկարահանման, հետո մաս մոնտաժի միջոցով հեղինակները կարող են հեռուստադիտողին թյուրիմացության մեջ գցել և հիմնովին փոխել նրա տատկերացումը տեղի ունեցածի մասին: Բերեն օրինակ: Նախընտրական քարոզարշավ է, և օդերատորը նկարահանում է մի կուսակցության հանրահավաք: Հավաքին բավական մեծ թվով մարդիկ են մասնակցում, բայց օդերատորը ընդհանուր լույսի չի նկարում, որտեղ կերևար հավաքվածների իրական թիվը: Նա նկարում է առանձին մարդկանց, փոքրիկ խմբերի, նկարում է հորանջող կամ անտարբեր դեմքեր, լացող երեխա... Դե, տատկերացրեք այս կադրերը՝ մոնտաժված իրար հետևից. ամբիոնից ելույթ ունեցող հռետոր, ձանձրացող կամ հորանջող մարդիկ, լացող երեխա, մի անկյունում զրուցող տղաների խումբ... Տղավորություն է ստեղծվում, թե հանրահավաքը մարդաշատ չէ, իսկ նրանք, ովքեր տատահամաք հայտնվել էին այնտեղ, կամ հիասթափվել են, կամ ձանձրանում են:

Շուգահեռաբար նկարահանվում է մեկ այլ կուսակցության հանրահավաք, որին տվյալ հեռուստաընկերությունը սատարում է կամ որի տատվերն է կատարում: Հավաքը սակավամարդ է, բայց օդերատորը նկարում է այն հատվածը, որտեղ մարդիկ խիտ են կանգնած, նկարում է ուշադիր լսող դեմքեր, դրոշմեր ու տատատամներ, խոշոր լույսով նկարում է դրականորեն արձագանքող մարդկանց... Յեռուստադիտողը դրական տղավորություն է ստանում: Այսինքն, նկարահանման ու մոնտաժի շնորհիվ հեռուստադիտողը միանգամայն հակառակ կարծիք է կազմում:

ՈՎԿՈՒՐՍ (ՏԵՍԱԽՅԻԿԻ ԴԻՐՔԸ ՆԿՎՐԱՅԱՆՎՈՂ ՕՔՅԵԿՏԻ ՆԿԱՏ-ՄԱՍԲ ԵՎ ՏԵՂԱՔՈՒՄ)

Ինչդեռ բացահայտել անգրագետ մասնագետին կամ նենգ ձեռնածոին:

Սովորաբար, տեսախցիկի ռակուրսը ցույց է տալիս հեղինակի վերաբերմունքը հերոսի նկատմամբ: Հեռուստատեսային կանոններով՝ տեսախցիկը դետոն է լինի հերոսի աչքերի բարձրության վրա կամ մի քիչ ցածր: Դա հեռուստադիտողին թույլ է տալիս հավասարը հավասարի դեպքում հերոսի հետ: Վերևից նկարելիս՝ հեղինակը «ցածրացնում» է հերոսին, ու դիտողի մոտ բացասական տրամադրություն է ստեղծում: Ներքևից նկարելով՝ տեսախցիկը «բարձրացնում» է հերոսին՝ փորձելով ավելի սիրելի ու հաճելի դարձնել նրան:

Դիտարկենք այսդիսի իրավիճակ. դուք դիտում եք տեսանյութ դատերազմի վետերանի մասին, ով ռազմական գործողությունների արդյունքում հաշմանդամություն է ստացել: Նա ամբողջ է խղճով դաշնակցներին և երկար ժամանակ է՝ փորձում է իշխանություններից գոնե հաշմանդամի սայլակ ստանալ: Լրագրողը նկարում է հերոսին իր տանը, ցույց է տալիս, թե որքան դժվարությամբ է նա տեղաշարժվում, և հարցազրույց է վերցնում նրանից՝ տեսախցիկը տեղադրելով աչքերի մակարդակից մի քիչ ներքև՝ ցանկանալով մեծարել հերոսին:

Վետերանը դատմում է իր մասին ու նաև դժգոհություն է հայտնում համադատասխան ղեկավարի մարմնից՝ վերևից ներքև նայելով:

Հաջորդ եղիվողը. թանկարժեք մեքենաները կանգնած են տվյալ ղեկավարի գերատեսչության շենքի մոտ (հիշե՛ք սայլակը): Սրան հաջորդում է հարցազրույցը ղեկավարի դաշտոնյայի հետ, որը վերևից է նկարված:

Լրագրողը տեսախցիկը տեղադրում է աչքերի մակարդակից վերև, ինքն էլ կանգնած է հարցերը տալիս: Սա ստեղծում է դաշտոնյայի մեղավորության զգացում ու տրամադրություն, թե նա արդարանում է: Ավելին, վետերանին նկարել են եռոտանու վրայից, այսինքն, տեսախցիկը չի դողում, իսկ դաշտոնյայի դեմքում խցիկն օդերատորի ձեռքում էր, ու կադրը դողում է: Դիտողին ենթագիտակցորեն թվում է, թե դաշտոնյան նյարդայնացած է ու փորձում է խուսափել հարցերից:

Այս օրինակը ցույց է տալիս, թե որքան հեշտ է լսարանին մոլորեցնել ռակուրսի ընտրությամբ:

Այլ կերպ ասած, ձեր փոխարեն որոշում են կայացնում ու ձեզ զրկում են դատողություններ անելու հնարավորությունից: Ձեզ դարտադրում են

եզրակացություններ: Սա մանիդուլյացիայի տիդիկ օրինակ է: Նկատենք, որ այս նյութը կարող էր և հակառակ տրամաբանությամբ նկարահանվել. վետերանը՝ վերկից, իսկ դաշտոնյան՝ ներքևից:

ԲՎՆՎՎԵՃԻ ԼՈՒՍԱՎԲՆՈՒՄ ԶԵՌՈՒՍՏՎԵՍՈՒԹՅԱԼԸ

ՎՄՆ-ում ընդունված փաստ է. ով հաղթում է հեռուստատեսային բանավեճում, նա էլ հաղթում է ընտրություններում: Որդես կանոն, դետք է բանավեճի մասնակիցներին հավասար հնարավորություններ ընձեռել: Սա ամերիկյան մի օրինակ, թե ինչդեպ է հեռուստատեսությունն ազդել բանավեճի ընթացքի և արդյունքի վրա՝ աջակցելով թեկնածուներից մեկին:

Բանավեճը լուսանաբերու էին հրավիրել խոշոր հեռուստաընկերությունների լրագրողների, ովքեր սատարում էին իշխանություններին:

Վրդյունքում՝ իշխանական թեկնածուին նկարահանել էին տաք լույսի ներքո, ճիշտ լուսավորությամբ, և գլխի հետևում երևում էր բաց վարդագույն ճանաչադասակ, այնինչ մյուս թեկնածուի լուսավորությունը խիստ կոնտրաստային էր՝ դեմքին ստվերներով, իսկ գլխի հետևում երևում էր սև \$ոն: Ընդհանուր լուսանկարի ժամանակ տարբերությունը նկատելի չէր, բայց խոշոր լուսանկարի կադրերի դեպքում դա ակնհայտ էր: Մեկ այլ կարևոր հանգամանք ևս. իշխանական թեկնածուն մրցակցից բարձր էր մտած, և կարծես ուսուցիչն աջակերտի հետ զրուցելիս լիներ:

Մոնտաժային հնարքներով՝ ուզածը մասում կարող էս շեշտադրում անել, ուշադրություն հրավիրել, փոխել ասվածի իմաստը և այլն...

Սա մի օրինակ, թե ինչդեպ սովորական թվացող հարցազրույցը դարձավ ընդարկման թեմա: Մարզերից մեկում մարզդետը դատմում էր \$ինանսական միջոցների սղության ու խնդիրների մասին և ընթացքում ձեռքով խփում էր սեղանին: Օղերատորը նկատեց մարզդետի ձեռքի խոշոր թանկարժեք մատանին և խոշոր լուսանկարի նկարեց ադամանդադատ զարդը: Մոնտաժի ժամանակ այս կադրն օգտագործվեց հենց այն մասում, որտեղ մարզդետը բողբում էր \$ինանսների դակասից: Աի կողմ թողնենք արվածի էթիկական ու բարոյական կողմը. փաստ է, որ այս մի հնարքով հեռուստադիտողն ամբողջությամբ կորցրեց վստահությունը խոսողի նկատմամբ:

Մեկ այլ դեպքում, երբ կինը դատմում է, թե ինքը կադր չունի սեքս-սկանդալի հետ, հետին լուսանում օղերատորը ցույց է տալիս ամսագրերով սեղան: Մոնտաժի ժամանակ հարցազրույցի ընթացքում

տեղադրում են ամսագրի խոշոր լուսանկար կադր՝ Sex shop գրությամբ: Հեռուստադիտողի մեջ տղավորություն է ստեղծվում, թե դա խոսողի հետևում երևացող սեղանի վրայի ամսագիրն է, մինչդեռ իրականում այն կարող էր նկարված լինել բոլորովին այլ տեղ և այլ ժամանակ:

Հիմա տեսնենք, թե ինչու է մոնտաժն աղավաղում խոսքը և ասելիքը:

Լրագրող - Ինչու է՞ս եք վերաբերվում անցած ընտրություններին:

Չրուցակից - Կարծում եմ, որ անցած ընտրությունները ցույց տվեցին, թե որքան է կոռումդացված մեր հասարակությունը, որքան են սերտանել քրեական ու քաղաքական վերնախավերը, որքանով մեր հասարակությունը չի վստահում իշխանություններին: Թեև ոմանք, իհարկե, դեռ հավատում են խոստումներին, վստահում դեկավարությանն ու համարում, որ երկիրը ճիշտ դեմոկրատական զարգացման ուղիով է գնում:

Իսկ հիմա տեսեք, թե մոնտաժից հետո ինչ է մնում: Ընդգծված հատվածներն այն ամենն են, ինչ գնում է եթեր:

Կարծում եմ, որ անցած ընտրությունները ցույց տվեցին, թե որքան է կոռումդացված մեր հասարակությունը, որքան են սերտանել քրեական ու քաղաքական վերնախավերը, որքանով մեր հասարակությունը չի վստահում իշխանություններին: Թեև ոմանք, իհարկե, դեռ հավատում է խոստումներին, **վստահում դեկավարությանն ու համարում, որ երկիրը ճիշտ դեմոկրատական զարգացման ուղիով է գնում:**

Սրանք այն հիմնական խնդիրներն են, որոնց վրա ղեկավարություն դարձնի հեռուստադիտողը: Սակայն վիզուալ հնարքները շատ ավելին են. ցանկացած բան դիտելիս ղեկավար է կասկածել ու հարցեր տալ, փորձել տեղեկությունը ստուգել մեկ այլ աղբյուրից: Եվ մի մոռացեք, որ ցանկացած հեռուստատեսային տատկեր իրականության սուբյեկտիվ վերարտադրությունն է:



մեղիաբառարան

ալեհավաք	սարք, որ որսում է հեռուստառադիո ազդակներ, ձայնային ալիքները հավաքող օդալար
աղբյուր	մորության, տեղեկության առաջին հաղորդողը
բաժանորդագրություն (թերթի)	տղագիր հրատարակություններ ստանալու իրավունք վճարի դիմաց
բլոգ	ինտերնետային օրագիր կամ անձնական էջ
բնաճայմ	բնական կամ մեխանիկական ձայների վերարտադրությունը, միջավայրի ձայները, աղմուկը
գլխավոր խմբագիր	ղեկավարում է ստեղծագործական թիմը, հաստատում է բովանդակությունը
գովազդ	որևէ մեկի կամ որևէ բանի մասին հասարակության մեջ մոխաստավոր կարծիք ստեղծելու կամ ուշադրության առարկա դարձնելու մոխատակով հրախարակային գովասանական հայտարարություն
գրաքննություն	դետության կամ իշխանության ամբողջական կամ մասնակի հսկողությունը և միջամտությունը տեղեկության և գաղափարների տարածման վրա
դիջեյ	անգլերեն՝ DJ՝ disc jokey - ընտրում եւ/կամ փոփոխում է ունկնդրին մատուցվող երաժշտությունը ռադիոյում, ակումբերում, երաժշտավար
դիտամկյում (ռակուրս)	այն կետը, որտեղից տեսախցիկը նկարում է օբյեկտը
ենթատեքստ	գրավոր կամ բանավոր խոսքի ծածուկ իմաստը, ենթաբովանդակությունը
զանգվածային լրատվամիջոց	տեքստային, ձայնային և վիզուալ տեղեկություններ փոխանցող հաղորդակցության միջոց, որ ունի զանգվածային լսարան
զրոարտություն	սուտ մեղադրանք
էթիկա	մասնագիտական և բարոյական վարքականոմներ
ընդհանրացմել	որևէ մասնավոր՝ առանձին երևույթի ընդհանուր նշանակություն տալ, ընդհանուր բնույթ վերագրել, ի մի բերել լրագրության մեջ՝ թեման, նյութն առանց օրինակի, ընդհանուր առումով ներկայացնելը. ընդհանրացումը կարող է լինել մասն եզրակացություն
թաքնված գովազդ	գովազդ, որ հայտարարված ու նշված չէ որդես գովազդ, այլ ներկայացվում է որդես հաղորդում, լուր, վերլուծություն...

թղթակից	լրատվամիջոցի համար նյութեր է ղայտրաստում ու հաղորդում
թվային փոխարկիչ	սարք, որ ընդունում է անալոգային տեսաձայնային ազդակներն ու դրանք վերածում թվանշայինի
թվանշանացում, թվայնացում	անցում անալոգային հեռարձակումից թվանշայինի. նշանակում է՝ ավելի լավ որակի եթեր, ավելի շատ ալիքներ թվանշային հեռուստացույցների կամ փոխարկիչների օգնությամբ
իմֆորմացիա	տեքստային, ձայնային կամ վիզուալ սինվոլների շարադրանք, հաղորդում ինչ-որ բանի մասին
իմֆորմացիոն տեխնոլոգիաներ	իմֆորմացիան տնօրինելու համար կիրառվող տեխնոլոգիաներ՝ համակարգիչներ, շարժական սարքեր, հեռախոսներ, համակարգչային ծրագրեր...
լուր	հաղորդում ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի մասին, տեղեկություն, լրագրողական նյութի տեսակ, ժանր. վերջերս տեղի ունեցած իրադարձության լուսաբանում, թարմ տեղեկություն
լսարան	մեդիա նյութի սղառողների ամբողջությունը, այն խումբը, ում ուղղված է տվյալ մեդիա տեքստը, մարդիկ, ովքեր սղառում են տվյալ մեդիա աղբյուրը
լրագրող	անձ, որ մասնագիտորեն զբաղվում է տեղեկություններ հավաքելով և դրանք զանգվածային լրատվության միջոցներով տարածելով
լրագրողական ժանր	լրագրողական նյութի տեսակ. հիմնական ժանրերն են՝ լուր, ռեպորտաժ, ակնարկ, հարցազրույց, վերլուծություն, դամֆլետ...
լրատվական գործակալություն	լուրեր ղայտրաստող կազմակերպություն, որ վճարի դիմաց դրանք տրամադրում է ՉԼՄ-ներին և այլ բաժանորդագիրների
լուսավորող	ղատասխանատու է նկարահանման լուսավորության համար
խմբագիր	բնագիր տեքստերը խմբագրող, դրանց բովանդակությունը հաստատող անձ
խմբագրական	խմբագրի գրած հոդվածը, որ ներկայացնում է ոչ միայն նրա կարծիքը, այլև ղարբերականի քաղաքականությունն ու ուղղվածությունը
խմբագրություն	ՉԼՄ-ի ստեղծագործական թիմը
խորագիր	հաղորդման, ղարբերականի որևէ էջի, բաժնի անվանումը

խտրականություն

ոչ միատեսակ վերաբերմունք իրավական տեսակետից հավասար մարդկանց նկատմամբ

ծածկույթ

այն տարածքը, որտեղ հասանելի են տվյալ հեռուստառադիոընկերության ազդակները

կարծիք

որևէ մեկի գնահատականը, վերաբերմունքը, համոզմունքը, դատողությունը

կարծրատիղ

կարծրացած, քարացած տեսակետ, մոտեցում

կոմտեքստ, համատեքստ

Գրվածքի ավարտում շարադրանքը, բառին կամ դարբերությանը նախորդող ու հաջորդող տեղեկությունը, իրադարձությանը, նորությանը վերաբերող փաստեր ու տեղեկություններ

հաղորդագրություն

հաստատության, դաշտոնական կամ մասնավոր ամձի կողմից հրատարակվող, տարածվող ինֆորմացիա, տեղեկատվություն

հաղորդակցություն

հաղորդակցվելը, ինֆորմացիա փոխանակելը ինչդեպ ամձամբ, այնդեպ էլ միջնորդավորված կերպով

հաղորդավար

հեռուստառադիոհաղորդումները, հրատարակային միջոցառումները վարող ամձ

հաղորդում

ձևաչափ, դարբերականություն, վերնագիր ունեցող թղթարկում հեռուստատեսությանը կամ ռադիոյով

հաճախություն

ռադիոալիքներ, որոնցով փոխանցվում են հեռուստատեսային և ռադիո ազդակները

համայնքային լրատվամիջոց

համայնքի կողմից կառավարվող, դատարաստվող, ֆինանսավորվող լրատվամիջոց

համրային լրատվամիջոց

լրատվամիջոցներ, որ տնօրինվում ու ֆինանսավորվում է հանրության կողմից և դարտավոր է ծառայել հանրության, այլ ոչ թե անհատների կամ խմբերի շահերին ու հետաքրքրություններին

հարցազրույց

լրագրության ժանր՝ հարցուդաստասխանի տեսքով. զրույց որևէ մեկի հետ՝ հանրությանը հետաքրքրող թեմայով

հեղինակային իրավունք

նյութական և ոչ նյութական ստեղծագործության նկատմամբ հեղինակի իրավունքը՝ ստեղծագործությունը օգտագործելու, տարածելու, ձևափոխելու

հեռարձակման լիցենզիա

հեռարձակման թույլտվություն, որ տրվում է մրցույթի միջոցով

հեռարձակում	մեդիա տեքստի փոխանցումը զանգվածային լսարանին՝ թվային կամ անալոգային ալիքներով
հեռուստատեսությամբ և ռադիոյի	հեռուստառադիոընկերությունները լիցենզավորող, դրանց աշխատանքը
ազգային համձնաժողով	կարգավորող և վերահսկող մարմին
հեռարձակող	դատասխանատու է դատարանի հեռուստա-ռադիո նյութերի հեռարձակման համար
հեռուստատեսություն	տեսաձայնային նյութերի, հաղորդումների արտադրությամբ, հեռարձակմամբ և վերահեռարձակմամբ զբաղվող հաստատություն
հղում (իմտերմետային)	ճշում, որ ուղղորդում, փոխանցում է որևէ իմտերմետ կայք կամ էջ. ճշումը կարող է երևալ տեքստի, լուսանկարի, անգամ տեսանյութի տեսքով և տարրանակում է իմտերմետային հասցե
հնչյունային ռեժիսոր	ձայնային ձեւավորման, ձայնի որակի դատասխանատու
վերնագիր	գեղարվեստական գործի, լրագրողական նյութի, հաղորդման անվանում
տղագրություն	հատուկ դրոշմող մեքենաների միջոցով զանազան նշանների վերարտադրության որոցեսը՝ տղագրելը, լույս ընծայում, հրատարակում
ՀՈԱԳ	Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային համձնաժողով, կարգավորում է հեռուստառադիո դաշտը, հայտարարում է մրցույթներ եւ տալիս լիցենզիաներ
լիցենզավորում (արտոնագրում)	մասնավոր հեռուստառադիոընկերությունների հեռարձակման թույլտվության տրամադրում
փաթեթավորում (մեդիայի)	լրատվամիջոցի ոճային ձեւավորման փաթեթը
թիկայի կանոնագիր	լրագրողական մասնագիտական թիկայի կանոնների շարք, որ ընդունվում է կամավորապես
դիտորդ մարմին	հայաստանյան մի շարք ՀԼՄ-ների կողմից ստեղծված ինքնակարգավորող մարմին
ընթերցողների խմբագիր	հետևում է ընթերցողների արձագանքներին, դատասխանում դրանց
խոսքի ազատություն	խոսքի ազատության իրավունքը մերառում է համոզմունք ունենալու, այն ազատորեն արտահայտելու, գաղափարներ եւ տեղեկություններ տարածելու եւ փնտրելու եւ ստանալու ազատություն:

համացանց (ինտերնետ)

միլիոնավոր փոքր՝ մասնավոր և հասարակական ցանցերից կազմված մեծ ցանց, որով կարելի է տվյալներ փոխանակել

վեբ (համաշխարհային ուտայն)

համացանցի տվյալների փոխանակման ծառայություններից մեկը, թույլ է տալիս հղումներով գտնել էջեր ու տեղեկություններ

մեդիա կորպորացիա

մի քանի լրատվամիջոցից կազմված խոշոր մեդիա ընկերություն

օդերատոր

Մկրահանում է տեսանյութեր հեռուստատեսության համար

դիմահարդար

ադահովում է հաղորդավարների դատչաճ արտաքին տեսքը

խորագիր

թերթի, հաղորդման բաժնի անվանում

կադր

Ֆոտոնկար, տեսանյութի տեսարան, դատկեր

հոդված

փաստերի հիման վրա գրված լրագրողական նյութ

հրատարակություն

բովանդակությունը հրատարակելը, տղելը, լույս ընծայելը, հանրությանը հասանելի դարձնելը

ձևաչափ

հաղորդման ձևը, տևողությունը, ոճը

ձևավորում

նյութի մաս կազմող գրաֆիկական դատկերները, լուսանկարները, երաժշտությունը

մամուլ

տղագիր լրատվամիջոցներ

մասնավոր լրատվամիջոց

լրատվամիջոցներ, որ տնօրինվում և ֆինանսավորվում են մասնավոր ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից

մեդիա արտադրություն

մեդիա տեքստի դատրաստման գործընթաց. օրինակ՝ մկարահանում, մոնտաժ, տեքստի դատրաստում, խմբագրում

մեդիա գրագիտություն

մեդիայի աշխատանքը ճիշտ հասկանալու, մեդիա տեքստերը վերլուծելու կարողություն

մեդիա մամիղույացիա

զանազան մեքենայությունների միջոցով համոզելու, ճշմարտությունը խեղաթյուրելու կամ թաքցնելու, լսարանին շեղելու և ցանկալի տղավորությունը ստեղծելու համար կիրառվող մեդիա հմարքներ

մեդիա տեքստ

որևէ մեդիայով փոխանցվող բովանդակություն, լինի դա տեքստային, վիզուալ, թե ձայնային

մոմտած	աուդիո-վիդեո նյութի մշակում, վերակազմակերպում
դեռտակամ լրատվամիջոց	դեռտության կողմից տնօրինվող և ֆինանսավորվող ՀԼՍ
դրոդյուսեր	մեդիա արտադրության ղեկավար
ռադիո	ձայնային նյութերի, հաղորդումների տատրաստմամբ, հեռարձակմամբ և վերարտադրությամբ զբաղվող հաստատություն
ռեմիսոր	բեմադրական աշխատանքների ստեղծագործական ղեկավար
սյումակ	դարբերականի՝ որոշակի հեղինակ կամ թեմատիկ ուղղվածություն ունեցող բաժին
սոցիալական մեդիա	ինտերնետային հաղորդակցամ, որ բոլորին թույլ է տալիս ստեղծել և տարածել բովանդակություն
սոցիալական ցանց	ինտերնետային կայք, որտեղ մարդիկ կարող են կադեր հաստատել, շփվել
սրբագրիչ	սրբագրում է նյութերը, այսինքն՝ ուղղում է վրիդակները, կետադրական և ուղղագրական սխալները
տեսախցիկ	տեսամայնագրող սարք
տեսամյութ	հեռուստատեսային նյութ, տատնություն
տղաբանակ	դարբերականի տղված օրինակների թիվը
փաստ	տեղեկություն, որ ադացուցելի է, մի բան, որ հաստատ տեղի է ունեցել կամ գոյություն ունի
քաղաքացիական լրագրություն	ոչ լրագրողների, քաղաքացիների կողմից ստեղծվող լրատվություն
քարոզչություն մեդիայում	տեղեկություն, որ նդատակ ունի որոշակի կարծիք ու դրական վերաբերմունք ստեղծել որևէ ամծի կամ երևույթի նկատմամբ
քմնադատական մտածողություն	տեղեկության վերլուծություն, տատճանների ու հետևանքների քմնություն, քմնադատական մոտեցում ցանկացած իմֆորմացիայի
օդերատոր (հեռուստատեսային)	վիզուալ նյութերը տեսախցիկով նկարահանող

Աշունների համար

Մշուկների համար

Series of horizontal lines for writing or drawing.

ISBN 978-99941-2-844-0

ՆՏԴ 659 (07)
ԳՄԴ 76 ց 7
Մ 432

Մ 432 Սեղիագրագիտություն: Չեռնարկ.
- Եր.: Ինտերմյուս, 2013, - 174 էջ:

ՆՏԴ 659 (07)
ԳՄԴ 76 ց 7

խմբագիր
.....

կազմեց
.....


սրբագրիչ
.....

գեղարվեստական խմբագիր
մկրտիչ մաթևոսյան

տեխնիկական խմբագիր
արմեն ղատվականյան

© 2013

© մկրտիչ մաթևոսյան, տառատեսակներ, 2013



ԻՆՏԵՐՆՅՈՒՄ